

891.88

Q-56

19 NOV 2011

40 30p

Թ Ռ Ո Ւ Ց Ի Կ

ՓՔՈՒՆ-ՓՔՈՒՆ ԽՕՍՔԵՐ

26

891.99
9-56

391.99

47-

21

01 JAN 2009

9-56

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՕՀԱՆԵԱՆՑ

(Գրք)

# Թ Ռ Ո Ւ Ց Ի Կ

Փ Ք Ո Ւ Ն-Փ Ք Ո Ւ Ն Խ Օ Ս Ք Ե Ր



Թ Ր Յ Լ Ի Ս  
Արագաձուլ շխալհրանոթ, Երկ. 17  
1914

19.03.2013

25982

ՀԱՐԱԶԱՏ ԵՒ ԹԱՆԿԱԳԻՆ ԾՆՈՂԱՑՄ

Ի ՅԻՇՆՏԸ

30-ամեայ պատկազրովիեան յօրեկեանի

ՆՈՒԻՐՈՒՄ ԵՄ

որդիական ջերմ սիրով

ՈՐԿԻ

Բոլոր իրաւունքները

վերապահուած են



11702-57

## ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԲ

Ձը կարծէք թէ ես կամենում եմ սորանով հայոց գրագանութիւնը հարստացնել: Իմ նպատակս է միայն ցոյց տալ հային գերմանական կատակների նմոշներ:

Մինչև այնտեղը, որտեղ գրեաժ է «Ինքնուրոյն», թարգմանել եմ ես ազատ 1914 թուի զանազան գերմանական երգիծաբան թերթերից: Իսկ մնացորդը ինքնուրոյն են: Սրանցից մի քանիսը տպւել են ժամանակակից միակ հայկական երգիծաբանական «Մախլաս» թերթում:

Ազատ թարգմանութիւն ասելով այն եմ ուզում հասկացնել, որ իմ թարգմանութիւններս գերմաներէնից փոփոխել եմ միշտ ասիացուն ճիշտ հասկանալի լինելու համար: Ինչպէս օրինակ, անունների և ձևական փոփոխութեամբ յարմարեցնելով տեղական վարք ու բարքի, նիստ ու կացի հետ:

Բարոյական պարտք եմ համարում գոնեայ այս միջոցով յայտնել իմ խորին շնորհակալութիւնս պարոն Գարեգին Լեոնեանին, որը այն-



քան բարի գտնւեց և առանձնապէս մի նկար  
գծագրեց ու գրքիս կողի համար իմ տրամա-  
դրութեանս տակ դրեց:

Թող այս հրատարակութիւնս մի փոքրիկ  
յաւիտենական յիշատակ լինի իմ թանգագին և  
քաղցր ծնողացս 30-ամեայ պսակադրութեան  
յօբելեանին: Ինչպէս գրքիս ընթացքը այնպէս  
էլ նրանց կենաց շարունակութիւնը լինի ուրախ  
և զուարթ!

Վերջացնում եմ խօսքս, գնա, գրքոյկ,  
թափառիր, մտիր ժողովրդի ամեն խաւերի մէջ,  
այցելիր բոլորին և կատարիր այն բարոյական  
պարտքերը, որ քո վրայ կայ բեռնած:

Գ ի Ժ

Տփլիս, մարտ 1914 թ.

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԱՐԺԱՆԱՑԱՅ ԳԻԺ ԱՆՈՒԱՆ

Անցեալները մի օր երկու համփսօններիս  
հետ գնացինք մի ճաշարան սովածութիւններս  
կշտութեան փոխարինելու համար: Բայց ճիշտն  
ասած այդ կարողութիւնը ոչ մէկիս գրպանում  
չկար — թէև ամենիս սրտում կար:

Մի քիչ քաշքշւելուց յետոյ ամենիս գաղա-  
նիքը պարզեց:

Որոշեցինք ով որ մեզանից ամենայիմար  
գժութիւններով թուցիկ փքուն-փքուն խօսքեր  
դուրս տայ, նա տարած լինի և միւսների հաշ-  
ւին ձգուի:

Առաջին ընկերս ասաց թէ ամենագիժը ինքն  
է, որովհետև հէնց երէկ մի օրիորդի հետ նշա-  
նուել է:

Երկրորդ ընկերս գժութեան առաւելութիւնը  
վաստակելու համար յայտնեց որ ինքը այդ  
գժութիւնը երեք շաբաթ առաջ է արել և ար-  
դէն մինչև անգամ պսակուել:

Հերթը մնաց ինձ խօսելու, առանց ընկեր-  
ներիս ժամանակ տալու վրայ բերի, որ ես ոչ

Թէ երեք շաբաթ, այլ երեք ամիս առաջ եմ  
նշանուել, այն էլ մի սարսափելի հրէշի վրայ,  
բայց և այնպէս վճուել եմ վաղը ամուսնանալ:

Եւ այդպիսով թէև տարայ յաղթանակը և  
մի լաւ էլ տուգեցի—բայց ընկերներիս կողմից  
այն օրուանից ի վեր ժառանգեցի Գիժ մակա-  
նունը:

Գիժ

## ԿԻՆԸ ՅԱՆԿԱՆՈՒՄ Է

4 տեսակ սև.—Մագերը, ունքերը, արտևա-  
նունքները և աչքի բերը:

4 տեսակ սպիտակ.—Կաշին, ձեռքը ատամները  
և աչքի սպիտակուցը:

4 տեսակ կարմիր.—Այտերը, շրթունքները, լե-  
զուն և լնդերքը:

4 տեսակ երկար.—Մէջքը, թևերը մատները և  
ոսկորները:

4 տեսակ կլոր.—Գլուխը, վիզը, դաստակը և  
արմուկը:

4 տեսակ փոքր.—Ոտները, քիթը, շրթունքները  
և մատները:

Գիժ

## Ք Ո Ւ Զ Ի Ն Է Մ Ի Ք Ս

Թարգմանութիւն գերմաներէն

«Ս Ե Ք Տ»

գուարնայի շաբաթաթերթից:



Կոմս Տաստյ Փօն Բիթենֆելդ, 56 տարեկան,  
կոկիկ հազնուած, սպիտակահեր, սև ներկած բեխեր,  
շքեղ դէմքով:

Կոմս հերբերդ Փօն Բիթենֆելդ, 28 տարեկան  
երկայնահասակ, շիք և կոկիկ:

Մարիա Փօն Թուցինգ, Միքս կոչմամբ:

—  
Հերբերդ.— Սիրելի պապա, մեր բանը  
բուրդ է!

Կոմս Տաստյ.— Որ բանը?

Հ.— Ներիր պապա, բայց ես շատ տարօ-  
րինակ եմ գտնում. ա՛հա երկար ու բարակ խօ-  
սեցիք, ճիշտ որ դու դեռ շատ անփորձ ես,  
ծանօթ չես կեանքի պրակտիկական հարցերում:

Կ.— Թոյլ տուր—

Հ.— Իհարկ է, միայն դատարկ մամօնիայի  
հարցերի համար եմ ասում, ինչ վերաբե-  
րում է կնոջ...

Կ.— Թողնենք այդ:

Հ.— Ուրեմն կարճ և ազդու: Մի տխուր  
երևոյթ պէտք է քեզ յայտնեմ: Մեր հարստու-  
թիւնը մահուան դուռն է գտնւում: Մենք լաւ



կեանք վարեցինք, երբէք աշխատանքը չճանա-  
չելով...

Կ.—Մի արտասանիր այդ բառերը, ես  
Չղայնանում եմ: Աշխատանքը մի թելադրւած  
գործ է, որ գոհացնում է մարդու նիւթական  
պահանջները...

Հ.—Եւ մենք բաւական դրամ ունէինք մեր  
պահանջները մինչև հիմայ առանց աշխատանքի  
գոհացնելու: Իսկ այժմ մեր հարստութիւնը հալ-  
ուեց ինչպէս ձիւնը բռան մէջ:

Կ.—Վերջի տարիներում կեանքը քանի  
գնում աւելի թանգանում է:

Հ.—Կանանց գինն էլ աղամանդների նման  
միշտ բարձրանում է. պապա միմիայն մի քանի  
հազար մարք է մնում իբրև մեր կարողութիւնը,  
ինչ անենք?

Կ.—Ճիշտ որ, ինչ սկսենք, մենք շատ բան  
ենք հասկանում և ոչինչ գիտենք և չենք կա-  
րող մենք մեր ճարը տեսնել, ինչպէս երեխա-  
ները, երբ նրանք ջուրն են ընկնում:

Հ.—Շատ շատ կարելի է դեռ ելեքտրական  
ընկերութեան տեսուչ լինել:

Կ.—Թու!

Հ.—Կամ դու կարող ես քո ազնուական  
անունը մի որևիցէ ընկերութեան ծախել, որ  
նրանք իբրև ընկլամ բանեցնեն:

Կ.—Իրանով շատ չենք կարող զարկուածք  
անել, չէ որ մեծ մրցումն կայ:

Հ.—Ուրեմն պապա, մեզ մնում է միայն...

Կ.—Այո, Հերբերտ, մի բան է մնում:

Հ.—Մի հարուստ աղջիկ առնել:

Կ.—Իմ խորին ցաւակցութիւններս, սի-  
րելիս!

Հ.—Հանաք ես անում, սիրելի պապա, ա-  
մուսնանալու համար չէ որ ես արդէն ծերացած  
եմ, իսկ դու պապա...

Կ.—Դու ց...

Հ.—(հայրական ոճով) տես, դու—դեռ ոչ  
բոլորովին վաթսուներեց:

Կ.—Խնդրեմ 56:

Հ.—Ներքի, դու աւելի երիտասարդ ես  
կեանքի երկրորդ շրջանում, քան ես: Առաջին  
շրջանը ես արդէն վերջացրել եմ և դեռ երկ-  
րորդի մէջ չեմ մտել: Այս տարիքում այնքան  
ծեր կգգայ մարդ...

Կ.—Խեղճ երիտասարդ ծեր! (ցաւակցու-  
թեամբ ձեռքն է սեղմում):

Հ.—Շնորհակալ եմ: Բայց ինչ հրաշալի  
տեսք ունես հայրիկ—առանց քեզ շողոքորթե-  
լու—տեսնողը կարծում է շատ շատ 45:

Կ.—Ուղիղ?

Հ.—Ազնիւ խօսք! Անցեալ օրն էլ պարոն  
Գիւնտհերը ինձ ասաց.—կտրիճ պարոն է ձեր  
հայրը: Վառվառն աչքերը, ինտելիգենտ բեխերը,  
սև մազերը...

Կ.—Ճիշտ այն օրը ներկած էի:

Հ.—Կրկին ներկիր, հայրիկ: Մի խօսքով ամենաերիտասարդ պարոնի ես նմանում: (ձեռքերը իրար շփելով) Երբ պէտք է քո հարսանիքին պարենք?

Կ.—Օհ, (Մի ստքը վեր է բարձրացնում) այդ կործանիչ ըեօմ... — պարենք?!

Հ.—Մի լաւ հարս պէտք է քեզ համար ճարել:

Կ.—Բայց աւելի լաւ կլինէր եթէ դու...

Հ.—Է...է...է...Ձի կարելի ինձանից պահանջել, ես ոչ մի գոհ չեմ խնայել, պապա, բայց իմ երիտասարդական այս կեանքս, ոչ...

Կ.—Իսկ ես չպէտք է թողնեմ այժմեան կեանքս?

Հ.—Այո, բայց քեզ համար այնքան էլ դժուար չի լինի, դու արդէն ուղին ճանաչում ես:

Կ.—Բայց մի մոռանար, որ արդէն վաղուց վարժութիւնից դուրս եմ եկել:

Հ.—Ոչինչ, նորից շուտով կը վարժուես. դա ինչպէս որ լողալն է, գիտես, երկար ժամանակ ջրի մէջ չես գտնուել, բայց մի քառորդ ժամ ջուրը մտնելուց յետոյ մի ձկան պէս կը լողաս: 15 տարի որբեայրի էիր, 15 ժամից յետոյ, սիրով ամուսնութեան օփը դուրս կգաս:

Կ.—Ճարահատեալ պէտք է ընդունեմ:

Հ.—Մխիթարուիր, պապա, շուտով կվար-

ժուես, պատուոյ խօսք, ես չէի կարող այդ ընդունել, եթէ ոչ փոքրիկ Լուցեան կը նախանձուի և ինձ գետին կը գլորէ: Ուրեմն երբ իմ կեանքը քեզ համար թանկագին է...

Կ.—Ասել է թէ ես պէտք է ինձ գոհեմ... միայն թէ դու—ամենալաւ ամուսինը կըլինէիր:

Հ.—Եւ հէնց դրա համար էլ չեմ ուզում, որովհետեւ երբ կինը ամուսնանում է իւր անունն է փոխում, իսկ մարդը իւր կամքը:

Կ.—Բարի, բայց որ հարուստ օրիորդը ինձ հետ կամուսնանայ?

Հ.—Քո խնամակալութեան տակ գտնուող քուզինէ Միքսը:

Կ.—Իա կլինի...

Հ.—Մի կէս միլիոն: Գիտես նա քեզ շատ է սիրում:

Կ.—Քեզ էլ:

Հ.—Ոչ, խնդրեմ, ինձ հետ միայն բարեկամական:

Կ.—(Քիչ մտածելուց յետոյ), Ոչ, ոչ, ոչ, երբ ինձ պէս հասակաւոր մարդ մի երիտասարդ աղջկայ հետ է ամուսնանում, դա ուղղակի անբարոյականութիւն է, այստեղ հարկաւոր է ոստիկանութիւն հրաւիրել. (զանգահարում են):

Հ.—Էլ ոչ մի խօսք: Ես լիովին քո շէքութեանը վերայ յոյս ունեմ! (ծառան յայտնում է.—Օրիորդ ֆօն թուցինց):



Հ.—Քուզինէ Միքս: Մհ, դա ճակատագրի ցոյցն է, յառաջ սիրելի պապա, մի տատանելի, վարւիլը այնպէս, ինչպէս հարկն է և համոզուիլը, ամենայն դէպս պէտք է ես իմ ապագայ մամայիս համար մի վարդի փունջ բերեմ (դուրս):

Միքս.—(23 տար. գեղեցիկ թարմ և զւարթ) Բարև քեզի, ներիլը, որ ես քեզ խանգարում եմ, բայց մի շատ կարևոր դէպք պէտք է պատմեմ...

Կ.—(ձեռքը համբուրելով) ես լսում եմ, խնդրեմ նստիլ:

Միքս.—Ոչ, ես չեմ նստում: Սարսափելի գոգուած եմ. պ. ֆօն էքենբերխտը, յայտնի բանաստեղծը ցանկանում է ինձ հետ ամուսնանալ: Ինչ պատասխանեմ?

Կ.—Ինչ որ քո սիրտը թելադրում է:

Մ.—Նա լսում է:

Կ.—Ամենևին?

Մ.—Ոուլ ու մունջ: Ես նրան չեմ սիրում: Ինչ անեմ:

Կ.—Մերժիլը իբրև բանաստեղծ նա պէտք է հասկանայ:

Մ.—Բայց ինչ պատճառ բռնել?

Կ.—Գրիլը... հա գրիլը միայն որ... հմմմ...

Մ.—Էս բոպէիս (ձեռնոցները հանելով նստում, վերցնում է թուղթ և գրիչ) ուրեմն, ես գրում եմ միայն որ... հմմմ...

Կ.—Ուրեմն գրիլը բացարձակապէս, որ ձեր

ուած պատիւը յարգում եմ, ամենաբարձր ըզգացմունքներս ձեզ համար կըլինէր և երկրիս վրայ ձեզանից աւելի լաւին չէի կարող գտնել, միայն թէ, այո, միայն թէ...

Մ.—(մատիտը ծամծմելով) այո, եթէ միայն...

Կ.—Այո, եթէ ես ուրիշին չը սիրէի...

Մ.—(Նրան լաւ դիտելով) ուղիղ է!

Կ.—ե-ե-ե—ինչ?

Մ.—(Վեր թռնելով) այո, ես մի ուրիշին եմ սիրում, ես նրան սիրում եմ խորը, հոգեպէս վայրենաբար, ցնորւած, այո, մօրեղբայր!...

Կ.—Միքս, Միքս, Միքս !!!

Մ.—Բարի, լաւ, սիրելի մօրեղբայր...

Կ.—Բայց քեզ յարմար և պատուաբեր է քո սէրը?

Մ.—Այո շատ յարմար:

Կ.—Ով է?

Մ.—(Հաւատարմութեամբ նրան նայելով) մօրեղբայրիկս, մի դժւարացնիլը, միթէ դեռ մինչև հիմայ չես գուշակել?

Կ.—(Ուղղում է, բեխերը ոլորում, վերջը զրկում է նրան և ճակատը համբուրում):

Մ.—Ա՛խ քաղցրիկ—մեղրիկ, սրտիս հատորիկ մօրեղբայրս! յուսամ?

Կ.—(Բերանը համբուրելով) Այո, յուսայ:

Մ.—Ես նրան զուր եմ սիրում?

Կ.—Ընդհակառակը: (ինքն իրան) այսպէս սիրուն օրհորդիկ, բաղցրիկ երեխայ, ոչ, վայրենի պէտք է մարդ լինի, եթէ!... (կրկին համբուրում է):

Մ.—Կը հալւեմ կարօտութիւնից:

Կ.—Շուտով կանցնի!

Մ.—Ուրեմն կարծում ես, որ Հերբերտը...

Կ.—(Որը կրկին համբուրել էր ուզում ցընցում է և շուտով ինքն իրան զսպելով ասում է) ի հարկէ, կարծեմ որ Հերբերտը—նա միշտ քո մասին է խօսում: (Ինքն իրան) սպասիր երիտասարդիկս!—ճիշտն ասած, այս ըոպէիս որ եկար քո մասին էինք խօսում: Նա քեզ համար փունջ է բերում:

Մ.—Բարի երիտասարդ: Բայց ինչու նա մինչև հիմայ ոչ մի սիրոյ խօսք չէր արտասանում?

Կ.—Գիտես ինչ? դա շատ էլ հեշտ բան չէ: Նա, այսինք...

Մ.—(Նրան կարելով) այո, մի կեանք պէտք է ունենանք: Դու իհարկ է մեր մօտ կապրես, և ես էլ քեզ պէտք է պահեմ և խնամեմ քո ծերացած...

Կ.—Ծերացած օրեր!

Մ.—Այո, քեզ համար հարկաւոր է մի խնամող կանացի էակ: (աւելի մօտենալով նրան):

Հ.—(Ներս է մտնում մի մեծ ահագին վար-

դի փունջ ձեռքին) Օհ, որքան շուտ վերջացրին: Թոյլ տուր...

Մ.—(Ընկնում է նրա վզով) այո, թոյլ կըտամ (առնում է փունջը) ինչ մեծ սէր, մօրեղբայրը արդէն ինձ ամեն բան պատմեց: Չարաճճի երեխայ, մինչև հիմայ ծածկում էիր, բայց հիմայ էլ քաւէ. համբուրիր ինձ, համբուրիր!

Հ.—(Համբուրում է):

Կ.—Շնորհաւորում եմ օրդի!

## ԿՌԻՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Սպայ.—Պատերազմը անհրաժեշտ է, բայց առանց փողի պատերազմ չի կարող լինել:

Հաշապահ.—Իսկ ես կարող եմ պնդել, որ առանց փողի կռիւներ շատ են պատահում:

Սպայ.—Ինչպէս?

Հաշապահ.—Մեր տանը մշտական կռիւներ են լինում, երբ մենք փող չենք ունենում!

## ՅՆՄԵՂ ՎԻՐԱՒՈՐԱՆՔ

Ա. Երևակայեցէք ինչպիսի բան պատահեց, այսօր ինձ հետ: Կնոջս ասացի, որ իր նոր շոքերը ինձ դուր չեն գալիս:

Բ. Ինչպէս, նա վիրաւորեց:

Ա. Ոչ, նա ուղղակի... մի ուրիշ շոր պահանջեց:

## ՀԱՐԵՒԱՆԻ ՎՐԷԺԸ

Մտավաճառի հարեանի կատուն շարունակ միս էր գողանում: Մի օր էլ թունաւորում է

նրան մտավաճառը և զցում հարեանի դռան առաջ: Երեկոյեան երբ գնորդները շատ են լինում խանութում, հարեանը բերում է սատկած կատին և ասում.

—Համեցէք 35-երորդը, իսկ մնացած 15-ը կը բերեմ, երբ այսքան զբաղւած չէք լինի:

## ՄԵՐ ԵՐԵՆԱՆԵՐԸ

Մանեան և Պետիկը կամենում են հայրիկ և մայրիկ խաղալ.—պէտք է սկզբից սկսենք, ասում է Պետիկը, ամենից առաջ կըսիրահարւենք, յետոյ կընշանւենք և նոր կը պսակւենք!

Մանեան համաձայնում է, բայց «նշանւել» խօսքի նշանակութիւնը չըզիտէ: Պետիկը նրան բացատրում է.

—Ինչպէս յիմար ես Մանեայ, միթէ չզիտես, երբ որ նշանւում են մէկ մահճակալի մէջ են քնում, իսկ պսակւելուց յետոյ, երկրորդ մահճակալն են գնում!

\*

Կրօնի դասի ժամանակ բացատրում է ուսուցիչը, որ Ագամի կինը նրա կողիցն է եղել: Երբ փոքրիկ Աշոտը տուն է գալիս, զանգատւում է կողքի անտանելի ցաւից ու երբ հարցնում են թէ ինչ է նշանակում այդ, պատասխանում է միամտութեամբ.

—Մամա, ես կարծում եմ, որ մի կին պիտի ունենամ!

\*

—Պ. պրոֆեսսոր, ես խնդրում եմ Ձեր դասեր ձեռքը:

Պրոֆ. (ցնորւած).—Եւ ի՞նչ էք կամենում այդ ձեռքի հետ անել:

\*

—Գիտե՞ս, Շոդո, լաւ կը լինէր, եթէ քո կօշիկը մի համար մեծ լինէր:

—Այո, և վատ չէր լինի, եթէ քո բերանը մի համար փոքր լինէր!

\*

Գրատախտակի վրայ գրած է «սիրելի»: Ուսուցչուհին հարցնում է փոքրիկ աշակերտներին թէ ինչ է նշանակում այդ բառը: Փոքրիկ Վիկտորիկը մատ է բարձրացնում: «Ապա աստեանեմ», ասում է վարժուհին:

Վիկտորը դուրս է թռչում նստարանի վրայից, վազում, գրկախառնւում և համբուրում է վարժուհուն:

#### Փ Ե Ս Ա Յ Ո Ւ Ն

Փեսան.— Ասացէք խնդրեմ, ձեր աղջկայ ձեռքը ազատ է արդե՞օք...

Մայրը.— Իսկ ձեր ձեռքը պարոն, ազատ է...

Փեսան.— Այո, իմ ձեռքը ազատ է:

Մայրը.— Ուրեմն վերցրէք ձեր ազատ ձեռքով ձեր գլխարկը և ուղեւորւեցէք դէպի տուն...

\*

—Մեր տանը լաւ է, մեր տանը ամեն երեխայ իր համար առանձին սենեակ ունի:

—Էդ ոչինչ. իսկ մեր տանը ամեն մի երեխայ իրան համար առանձին Մամա ունի!...

\*

Նախանձոտ կինը (անձրեկին տուն վերադարձող ամուսնուն).—Դու ինձ խաբում ես, ձախ կողքդ բողբոլիւ թաց է, իսկ աջ կողքդ շոր, այդ հովանոցով դու մի կնոջ ուղեկցել ես:

#### Դ Ա Ր Ո Ւ Մ Օ Ր Ի Ո Ր Դ Ն Ե Ր Ը

—Սիրելի Հեղինէ, լսեցի որ ամուսնանում ես, ճշմարիտ է:

—Այո, ամուսնանում եմ:

—Եւ ի հարկէ ամեն ինչին զնելու ես վերջակէտ:

—Ոչ, սիրելիս աւելի շուտ բազմակէտ...

\*

Տրամվայում նստած մի հրեայ թքում է գետնին: Կանդուկտորը ասում է, — «Ձէք տեսնում այնտեղ գրւած է՝ «թքելն արգելւած է»:

Տեսնում եմ, բայց միթէ կարելի է բոլոր  
զբւածներին հետևել, պատասխանում է մարդը,  
այնտեղ զբւած է նաև «պահանջեցէք անգլիա-  
կան շօկօլադ»: Ես պահանջում եմ, բերէք»:

#### ԱՅՕՐԻՉՄՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ՝

Կանայք շատ անգամ կեղծ արտասուքնե-  
րով բնական մարգարիտներ և աղամանդներ են  
ստանում:

Երբ կնոջ լեզուն ասում է «ոչ», այդ ժա-  
մանակ նրա աչքերի մէջ կարելի է կարդալ «այո»:

Երիտասարդութիւնն առանց գեղեցկութեան,  
գեղեցկութիւնն առանց երիտասարդութեան ան-  
պէտք է կնոջը:

Երբ սէրը կոյր է, ատելութեան աչքերը  
աւելի լայն են լինում:

Մի կին կարող է 10 մարդու յիմարացնել,  
իսկ տասը մարդիկ չեն կարող մի կնոջ խելօ-  
քացնել:

Ինչ կանայք կէս ականջով են լսում, ամ-  
բողջ բերանով են պատմում ուրիշներին:

Կանայք ուրիշների սրտերում աւելի լաւ  
են կարողանում կարդալ, քան թէ սեփականում:

Կանայք և զրքերը երբեմն իրար են նմա-  
նում — կամ առաջին ականթարթում իսկոյն և եթ  
հասկանում ես նրան, կամ բոլորովին չես կա-  
րողանում ըմբռնել:

Պէտք է տեսնել թէ կանայք ինչպէս են  
վարւում իրենց ընկերունու հետ և այն ժամա-  
նակ եզրակացնել թէ ինչպէս կը վարւի թշնա-  
մունու հետ:

Կան կանայք, որ գաղտնապահ են, բայց  
միայն իրանց տարիքի վերաբերեալ:

Ամենաթունդ շատախօս կինը կը լռի, երբ  
պէտք է ընկերունուն պաշտպանի:

Մի մարդ, որ մի կնոջ չէ իշխում, ուրեմն  
նա սիրւած չէր այդ կնոջից:

\*

Մի հարիւրապետ մեզ ինքնակամ զինուոր-  
ներիս քննելուց յետոյ դժգոհ յայտնեց.

— Իհարկ է շարունակ նոյնը! Զինուորական  
կեանքը բազկացած է. հարբելուց, հայոյանքից և  
«յարգանքներս յաղորդեցէք ձեր պատուական  
տիկնոջը»!

\*

Անցեալ օրը նստած էի տրամվայում երկու  
դեռահաս օրիորդների կողքին և լսեցի հետևեալ  
կատակերկական հարց ու պատասխանը. — Ինչ-  
պէս է կոչուում մէջքի շարունակութիւնը? — նու  
երեք տառից է բազկացած . . . վիզ!

\*

Փոքրիկ Լիզան ցանկանում է մի եղբայրիկ:  
Երբ մայրիկը հարցնում է թէ ինչու քոյրիկ չէ  
կամենում, պատասխանում է նա.



— Ինձ համար միևնոյն է, քոյրիկ թէ եղբայրիկ, միայն թէ որն որ ամենից շուտ կլինի!

\*

Գիշերւայ ժամը մէկին զնում է մի սըրճարանի աղախնուհի (գերմանական տիպ, հասակը 180 սանտիմետր) տուն:

Ճանապարհին պատահում է նրան մի երիտասարդ (տարիքը մօտաւորապէս 17ը), որը կարծելով աղախնուն որ «նրանցից» է, շատ հետևելուց յետոյ հարցնում է վերջապէս, թէ արդեօք կարող է նրան ուղեկցել:

Օրիորդն էլ պատասխանում է նրան կարծես թէ խղճում է. — Խօսմ չես վախենում, մանչուկս, մենակ տուն գնալուց?

\*

Ենթասպայ (զինուորներին խաղացնելու ժամանակ). — Անասուններ! ինչու շարունակ դէպի ձախ էք նայում? — Հը ճիշտ, այնտեղ մի խուրձ կայ, հա! շատակեր աւանակներ, աջ!...

\*

Երրորդ զանգից յետոյ ներս է մտնում շտապով ժողովրդական թատրոնում մի պարոն, և հարցնում է կասսիրին:

— Մի լաւ տոմսակ տւէք, բայց յարմար տեղ լինի:

— Համեցէք շատ լաւ և յարմար տեղ է:

Շատ չանցած դուրս է վազում այդ պարոնը

կասսիրի մօտ և բարկանում է.

— Բաս ասում էք յարմար տեղ էք տւել? վերջի կարգը, կողքի ամենավերջի աթոռը!

— Շատ յարմար տեղ է, հաստատում է կասսիրը, եթէ Աստուած չանի հրդեհ ընկնի...

\*

— Երեկւայ սիգարները, որ ես ձեզանից գնեցի շատ վատն են:

— Լաւ որ դուք նրանից տաս հատ ունէք, իսկ ես ինչ անեմ որ 9500 հատ էլի ունեմ:

\*

Հրեայի մէկը իմանում է որ իր կինը իրանից գաղտնի բիրթայում խաղացել և տարւել է 4000 ռուբլի: Այս բանը պատմում է ընկերոջը, որը իր ուսերը վեր է քաշում և մեղքնալով ասում.

— Բայց բանն էլ այն է որ տարւելուց յետոյ մինչևանգամ այդ 4000 ռուբլին վճարել է նա:

\*

Երբ նա օրիորդին համբուրեց և յետոյ էլ նրա վարդագոյն թշները իրանին սեխմեց, քիչ մտածելուց յետոյ հարցնում է օրիորդը.

— Ասա, Տիգրան, դու քեզ ես ածիւում?

— Այո!

— Ես հասկացայ, քո դէմքը ամենից կոշտն է, որ ես մինչ... — յանկարծ վախեցած լոււմ է գլխի ընկնելով, բայց յամարեայ արդէն ուշ է

լինում, և նա մի խորը հոգևոց է քաշում:

\*

—Ուրեմն դու կամենում ես անպատճառ բժշկի հետ ամուսնանալ? Բայց չէ որ նա քեզ հետ աւելի մօտիկից ծանօթ չէ:

— Այո, մամա, նա ծանօթացաւ անցեալ օրը երբ դու հայրիկի հետ թատրոն էիք գնացել, և ես նրա հետ մենակ մնացի!

\*

—Ամուսնուս ստէպ-ստէպ ճանապարհորդելը շատ անհաճելի է:

—Այո այդ յանկարծակի մեկնելը:

—Ոչ, ես ուզում եմ ասել յանկարծակի վերադարձը!

#### ԴԱՐՈՒՍ ՕՐԻՈՐԳՆԵՐԸ

—Տես, Անիւշկայ, ինչպէս է արագիլը\*) իր գլուխը թաղցնում:

—Երևի ամաչում է, որ մարդիք սուտեր են խօսում նրա մասին!

\*

Օրիորդը (նեղիշէյում իր հորեղբորորդուն)  
—Ես ամաչում եմ քո երեսին ուղղակի նայելու, սիրելիս:

\*)Ներուպա ընդունուած է երեխաներին ասում են, որ արագիլն է երեխաներին բերում հեռու տեղից:

—Եթէ կամենում ես պատուհանի փեղկերը ծածկեմ:

\*

—Ինչ կանէիք դուք, Սիրանոյշ, եթէ հարստութեան ասուածուհին փողի անձրև տեղացնէ?

—Երբէք անձրևնոցս չեմ բանար:

\*

—Ամաչեցէք, ամուսնացած մարդ էք և յետևիցս էք ընկել:

—Դուք ճանաչում էք կնոջս?

—Ոչ:

—Ուրեմն այդպէս մի դատէք!

\*

Երբոր գանկակակապս բացւում է, նշանակում է «սիրահարը անհաւատարիմ է գտնուում»: Հիմայ ինձ շատ է հետաքրքրում, թէ արդեօր որն է նրանցից անհաւատարիմը!

\*

Պրօֆեսսօր (որը խորը զբաղւած է լինում, երբ նրա ծառան իր յետևի պահարանի միջից մի բան հանելուց յետոյ պահարանի դուռը բաց է թողնում)

—Սեչօ, դուռը ծածկիր, փչում է!

\*

Գարնանային երեկոյ, արևը մայր է մըտնում, մի այգում նստարանի վրայ նստած են մի սիրային զոյգ: Մարդը մանուֆակտուրայի խա-

նութի գործակատար: Օրիորդը խորը հոգևոց է քաշում և հարցնում է ցածր.

— Բայց սիրելիս, քո սէրն էլ դէպի ինձ իսկական է?

— Իսկական? ասում է նա ցնորւած, մի տես է, գոյնը չը թափւող, կարելի է և լւանալ!

\*

Պարոն Պետրոսը, մի շատախօս մարդ սովորութիւն ունէր խօսակցութեան ժամանակ ձեռքերով շարժողութիւններ անել: Մի անգամ էլ երբ տաք-տաք խօսակցութիւն էր մղում, բարձրացնում է իր ձեռքը—այդ միջոցին ձանձրացած ընկերս նրա ձեռքիցը բռնում և ասում է.

— Պարոն Պետրոս, միթէ ուզում ես այդպէս շուտ զնալ? Ի՛նչ լաւ, երթաս բարե!

\*

Մի կին (որին 2 տարի բանդ են նշանակում մի յանցանքի համար, դատարանում, իր որդւոյն).— Տիգրան, գլխարկիս վերայից փետուրները կը պսկես և կամօղում կը զնես:

\*

Ընկերօջս մօտ ամառանոցում հիւր եմ գնում:

Օհ! ասում է նա ուրախացած, այսօր ինչ հիանալի օր է, երևակայեցէք առաւօտեան մեր կովը մի հորթիկ ծնեց, ճաշին մեր խողը 4 հատ ձագ ունեցաւ և հիմայ էլ դուք եկաք!

\*

Գաւառական բանքից մի օր մի քիչ ուշ են դուրս գալիս: Նոյն բանքի դիրեկտորի կինը պատահում է դրանց և հարցնում է իր ամուսնուն ուշանալու պատճառը.

— Միթէ շատ գործ ունէին?

— Ոչ, պատասխանում է դիրեկտորը, երևի նրանք ժամանակից ուշ են քնից արթնացել:

\*

Մի երիտասարդ զաշնակահար վերջացնում է իր նուագումը:

Ձեզ տեսնելով, ասում է մի պարոն, ես երկու անձնաւորութիւն եմ յիշում:

— Կարելի է իմանալ? հարցնում է երաժիշտը:

— Մէկը Մօցարտին...

— Օհ, խնդրեմ շողոքորթում էք!

Ձեզ նման նրա էլ աղանջները ծովուած էին...

— Հըմ.

— Իսկ միւսը իհարկէ Աղէքսանդր մեծին...

— Բայց նա երաժիշտ չէր!

— Եւ հէնց դրա համար էլ!...

\*

— Չարմանալի մարդ է մեծ քրոջս նշանածը: Ինձ ասում է «Որքան մեծ աղջիկ ես...» իսկ քրոջս «փոքրիկ մանկիկս...»

\*

Մի ծառայի վկայականի մէջ գրուած է.  
...յարմար չէ մեզ համար: Նա շատ հաւատարիմ է:

\*

Մի ծեր գեղջկուհի երգուում է դատարա-  
նում:

— Կրկնիր հետևեալ խօսքերը, ասում են  
կնոջը, երգուում եմ...

— Երգ-ուում-ուում եմ-եմ... կրկնում է պա-  
ռաւը դողդողալով և վախենալով:

— Մի քիչ շուտ-շուտ... Աստուծով!...

— Մի քիչ-շուտ-շուտ Աստ-ուծով... կրկ-  
նում է խեղճ պառաւը:

\*

— Այս ինչ համեզ կերակուր է, տիկին  
Շուշանիկ, որտեղ սովորեցիք, անպայման մի  
գրքի միջից էք վերցրել?

— Ոչ, անցեալ անգամ ես թատրօն էի գը-  
նացել և յետևս նստող մի կին իր հարևանուհուն  
էր պատմում:

\*

Հիւրանոցում իջնում է մի կին № 49 սե-  
նեակում: № 94 սենեակի պարոնից ծառան  
հրաման է ստանում առաւօտեան ժամը 5-ին  
զարթեցնել: Բայց նա փոփոխելով թւերը առա-  
ւօտեան 49ի դռանը բաղխելով յայտնում է որ  
ժամը 5ն է:

Կինը ուշադրութիւն չը դարձնելով մի

կողքից միւսը շուռ է գալիս: Տեսնելով որ պա-  
րոնը վեր չէ կացել տասը րոպէից յետոյ կրկին  
բաղխում է դուռը:

Կինը հարցնում է ներսից թէ ինչ է պա-  
տահել:

— Պարոնը դուրս եկաւ? հարցնում է ծա-  
ռան:

### ՔԱՂԻԱԾՔ ՆԱՄԱԿԻՑ

«...Ես լաւ տեսայ, թէ Դու ինչպէս երեկ  
երեկոյ ուրիշների հետ թե-թեի տւած զբօսնում  
էիր, ամաչիր, անհաւատարիմ. — մեր մէջ եղած  
կապը կա՞րող ես լուծած համարել, որովհետեւ  
Դու խաբեբայ ես և ես Քեզ ուղղակի ատում եմ!

Քեզ սիրող Աննա»:

\*

Փոքրիկ Սիրանոյշը ներսէ վազում և ասում է.

— Մամա, ես Աստուծոն տեսայ!

— Ինչպէս, սիրելի զաւակս... ?

— Ճշմարիտ, մամաշա, նա դեռ փողոցումն  
է, հայրիկը խօսում է նրա հետ:

— Բայց ինչիցն ես դու եզրակացնում որ  
նա Աստուածն է?

Հայրիկը ինքն ասաց. հէնց որ պատահեց փո-  
ղոցում, մօտեցաւ նրան և ասաց. — Ախ Աստուած  
իմ, որքան ժամանակ է քեզ չեմ տեսել!

\*

—Երբ ես Տփխիս եմ գալիս իմ ամենառաջին տեսութիւնս անում եմ մի ծեր բարեկամուհու մօտ:

—Բայց ծեր բարեկամուհիդ մի երիտասարդ և գեղեցիկ աղջիկ ունի:

\*

—Ինչպէս էք, ինչ են անում ձեր տանը?

—Ախ, այնպէս եմ վրդովւում. կիինս աղագային գործերի մէջ է խառնւում և օրւայ մէջ հազիւ 1 ժամ տանը մնում:

—Ճիշտ որ դա շատ անհաճելի է!

—Ոչ, այնքան էլ վատ չէ, այդ մէկ ժամն էլ շուտ է անցնում:

\*

Մի բժիշկ գիշերը տուն գնալիս հարբած է լինում, ընկնում է փողոցի մի անկիւնում և քնում է: Առաւօտեան ժամը 6-ին երբ ոստիկանը նրան զարթեցնում է, քնաթաթախ բժիշկը ժամացոյցին է նայում ու ասում.

—Ձէ որ հիմայ իմ ընդունելութեան ժամանակս չէ, ինչու էք խանգարում!

\*

Մրճարանում.—միթէ այդքան քնհատ ես որ շարունակ հօրանջում ես?

Ոստիկանապետ.—Ոչ, բայց տես այն միւս սեղանի առաջ նստած է մինը, որ շատ նման է մի փախած կասսիբի մասին տւած նկարագրու-

թեանը, որի մէջ նաև իբրև գլխաւոր նշան նրա ատամներ են տւած, ես էլ ցանկանում եմ նրա բերանը տեսնել, դորա համար յօրանջում եմ, որ նա էլ իր բերանը բանայ:

\*

—Ձեմ հասկանում ինչու աղքատ դասակարգը տրանջում է շարունակ գետնախնձոր ուտելուց, ես էլ ամեն օր կարտօֆիլ եմ ուտում, մի օր տապակած հաւի հետ, մի ուրիշ օր խորովածի հետ կամ բիֆշտեկի և կամ իշխանի հետ:

\*

Պարոն Լևոնը զուգւած զարդարւած գնում է իր սիրականի մօտ մի մեծ փունջ ձեռին: Այնտեղ գտնում է նա միայն փոքր Սաշային և հարցնում է.

—Սաշա, որտեղ է քո քոյրը?

—Նա իր սենեակումն է, կանգնած է հայելի դէմ շրթունքները սրելով կրկնում է շարունակ. «պարոն Լևոն, ձեր հարցը ինձ շատ է զարմացնում!»

\*

Սաթեն մօրաքոյրը այտի վրայ մի խալ ունի: Փոքրիկը մի լաւ դիտելուց յետոյ հարցնում է.  
—Մօրաքոյր, եթէ մատով սեղմենք այտիդ վրայ կը զանգահարէ?

\*

—Այնպէս չէ, Թամարա, անցեալ տարի դու

մի ոսկերիչի խանութում ամենառաջի ծախողն էիր?։

—Այո, իսկ հիմայ առաջի գնողն եմ!

\*

—Բոլոր հաշիւները ինձ ես բերում Հոփսիսիմէ?

—Բայց չէ որ ես քեզ հաւատարմութիւն երդուեցի!

\*

Տրամւայում նստում է մի կին ձեռքին մի կողով լի պրակիկիայով։ Որովհետեւ գլխարկի քորոցի սուր ծայրը երկար դուրս է ցցւած, կանդուկտօրը խնդրում է նրան օրէնքով շարժել և վայր իջնել։

Կինը գժւարանում է իջնել աչքի յառաջ բերելով տան հեռաւորութիւնը և կողովի ծանրութիւնը։ Յանկարծ մի միտք է ծագում։ Իսկոյն հանում է կողովի միջից մի գետնախրնձոր և զարկում քորոցի սուր ծայրին։ Կանդուկտօրը տալիս է նրան տօմսակը...

\*

Աղախինը.—Խնդրեմ չը խանգարէք, պարոն ես կամենում եմ վառարանում կրակ անել։

—Օհ! իմ մէջս վառում է արդէն!

ԿԱՆԱՆՅ ԴԵՐՉԱԿԻ ՄՕՏ

—Օհ, յարգելի տիկին, ձեր փայլը ինձ հիացնում է!

—Բայց, պարոն, դուք իբրև դերձակ պէտք է չափս բռնել գիտենաք։

\*

Կուպէում.— Դուք լապտերը վառում էք թունել անցնելու ժամանակ!

—Իհարկէ, օրիորդ, ես ուզում եմ տեսնել թէ ինչ եմ համբուրում։

\*

Օրիորդը։ Ինչու են մեզ անուանում թոյլ սեռ ես չեմ հասկացել դեռ, ես և իմ քոյրս միշտ Ուժեղ բաներ ենք անում ճիշտ։

\*

—Լուցիայ, ինձ մի համբոյր տուր!

—Օհո, Վահան, շատ վտանգաւոր է!

—Ինչու է վտանգաւոր, ոչ մէկիս էլ չէ կծի!

—Փորձենք, ասում է Լուցիան։

Երբ Վահանը համբուրել է կամենում, Լուցիան ձեռքերով յետ է զրզում։

Վահանը մտածում է. երեկոյեան երբ մութը կը պատէ, այն ժամանակ կը գնամ փափուկ շրթունքները համբուրելու։

Նա գնում է։

Յետոյ պատահում է այնպէս, ինչպէս որ կը պատահէր մի երեխայի հետ—այսինքն. երբ երեխան գնում է գետը, որ մի քիչ ոտքերը լւանայ, ջուրը շատ հաճելի է թւում, քիչ-քիչ

վայր իջնելով, յանկարծ ընկնում է ջրի մէջ և գետը տանում է հանգիստ ու դանդաղ:

\*

—Պարոն պրօֆեսսոր, մի մուրացկան ողորմութիւն է խնդրում: Նա ասում է թէ արձակուած բանտարկեալ է:

Պրօֆ. (ցնորւած)—Ըհը, բայց ինչու է արձակուած?—

ԿԵԱՆՔԻ ՄԷՋ ԵՐԲԵՄՆ ՄԻՏՍ Է ԳԱԼԻՍ

Կնոջից անկարելին մի պահանջիր. հաւատայ, սիրելիս, կարելին արդէն բաւական է:

Ճշմարտութիւնը գտնել այնքան դժուար է, քան թէ քաջութիւն ունենալ նրան արտասանել:

Անբաղդութիւնը մի մուրճ է, որով ճակատագիրը մարդուս միտքը հոգու հետ կը ծեծէ:

Ոչ մի ճշմարիտ արտասուք զուր տեղը չէ թափուում:

Արտասուքի մէջ ևս կարող է արեգակը փայլել:

Մի կաթիլ բաղդաւորութիւն մեզ աւելի է հովացնում, քան մի բաժակ լի իմաստութիւն:

Կանայք հասկանում են օտարների սրտերի մէջ աւելի լաւ կարգալ, քան թէ սեփականում:

Ամուսնութեան մէջ մի սխալմունք կայ.— կուշտ ենք, բայց էլի ստիպուած ենք սեղանից չը հեռանալ:

Այսպէս է սէրը.— առաջ ուզում են մէկը միւսի համար մեռնել, իսկ յետոյ չեն ուզում մէկը միւսի հետ ապրել:

\*

Հօմբարդում.— Շիլլերի գրուածքներին ոչինչ չեմ կարող տալ:

—Մի գուցէ իմ սեփական գրուածքներս բերեմ?

\*

Կինը.— Ամուսինները կամ իրար սիրում են և կամ բաժանուում են միմեանցից:

Մարդը.— Ուրեմն բաժանելի միմեանցից:

\*

Երիտասարդ կին.— Ես մի երկուորեակ քոյր էլի ունեմ տանը:

Պարոն.— Երևի ձեր աշխարհ գալու ժամանակ մարդիք բղաւել են. — կրկնութիւն! րեպետէ!

\*

—Լսել էք, Տիկին Սոֆեայ, քաղաքը կամենում է խողովակներով տներում ջուր բերել, որպէսզի կանայք չը գնան աղբիւրի մօտ, այնտեղ երկար բարակ կանգնեն ու շատախօսութիւն անեն!

—Հա, իսկ դուք էլ լսել էք, պարոն Սեփօյեան, շուտով տներում խողովակներով գարեջուր պէտք է բերուի, որ մարդիք չը գնան գինեաներում և ամբողջ գիշերները այնտեղ չ'անցկացնեն:

\*

Մափրիչ. — (ներս մանող յաճախորդին) Բարև պարոն բժիշկ:

II յաճախորդ (ինքն իրան). — Ինչ յիմար մարդ է, էս սափրիչը! Մինչև անգամ ինձ «կոմս» ախողոսը տւեց:

\*

— Շատ տխուր է, որ ես նկարիչ եմ և փողոցում ձիւն եմ մաքրում ձեզ հետ:

— Սուտ-սուտ մի դուրս տար, նկարիչ! Ես մի անգամ կամեցայ միլիօն ջի լինել:

\*

— Ուրեմն հին շոր վաճառող Իսահակի շորերը անտառում թալանել էին?

— Այո, և երբ մթանը սուս է վերադարձել, յայտնւել է, որ աւազակները նրա շորերը իր խանութումն էին ծախել:

\*

Գիւղի ճաշարանում. — Ես զարմանում եմ, որքան լաւ ծառայութիւն ունէք դուք: Գեո մի կերակուրը չը վերջացած միւսն էք բերում:

Աղախին. — Եւ երևակայեցէք, ի միջի այլոց խոզերին էլ եմ կերակրում նոյն ժամանակուայ ընթացքում:

\*

Գիշերը կամենում էի կնոջս մենակ աւտոմօբիլով տուն ուղարկել: Բայց նկատեցի որ մօտս միայն մի նատ տասը ընթրիանոց թուղթ կար: Պէտք էր աւտոմօբիլի փողը կնոջս տալ

և ինձ մօտ էլ մի բան պահել: Հարկաւոր էր մանրացնել, ոչ մի խանութ բաց չէր: Մի անցորդից խնդրեցի 10 ընթրի մանրացնել: Նա տւեց մանր փողը և յետոյ կնոջս երեսին նայեց, ինձ նայեց և ասաց.

— Իրաւունք էլ ունէք, 10 ընթրի մի քիչ շատ կլինէր!

\*

Աղախնուհուն. — Ես ընդդէմ չեմ երբ քեզ մօտ ընկերուհիներդ են գալիս, բայց երեկ երեկոյ ձեր հարա-հրոցից և ծիծաղից ես չը կարողացայ քնել:

— Ներողութիւն, աղջիկ-պարոն, պատասխանում է աղախինը, բայց ես նրանց միայն պատմեցի թէ ինչպէս էք դուք կարկանդակ պատրաստում:

\*

— Ասացէք խնդրեմ ձեր դուստրը ամուսնացաւ նրանից յետոյ երբ ես վերջին անգամին այստեղ էի?

— Այո, ամուսնացաւ և արդէն բաժանւեց էլ!

— Ճիշտ և ով է այն բաղաւորը?

\*

Մի երիտասարդ հեւ ի հեւ վազում է դեղատունը և խնդրում է իրան համար թոյն:

Դեղատան պրաւիդորը չի համաձայնում, վերջապէս շատ խնդրելուց յետոյ տալիս է մի փոքրիկ շիշ:



—Շնորհակալութիւն! Որքան պէտք է վճարեմ?

—Յիսուն կոպէկ,—բայց սպասիր տասը կոպէկ էլ շին գրաւ տւէք, գիտէք, երբ վաղը այդ շինը յետ բերէք 10 կոպէկ կստանաք!

\*

Ամառանոցում մի սենեակ էի փնտրում: Վերջապէս մի երիտասարդ տիկնոջ մօտ գտայ մի փոքրիկ սենեակ, և երբ հարցրի թէ արդեօք փոթորիկից ազատ է այդ տունը, պատասխանեց քիչ ծաղրելով.

—Ի հարկ է, դէ՛հ մենք էլ նոր ենք ամուսնացել!

\*

—Կարծեմ վարպետը հիւանդ է, բայց նա իր աշակերտին ծեծում է?

—Թեթև տնային աշխատանք թոյլադրել է նրան բժիշկը:

\*

Ուսուցիչ.—Օրինակի համար ահա այստեղ չորս խնձոր կայ, ինչպէս կը բաժանէք 13 երեխայի մէջ:

Լուսթիւն: Ոչ ոք չի համարձակում պատասխանել, մի փոքրիկ աղջիկ մատ է բարձրացնում:

—Մնձորից կօմպոտ կ'եփեմ և ամենին մի մի գդալ կտամ:

\*

Մի պարոն պատւիրում է իր համար ճաշ: Ստիպւած է լինում շատ սպասել: Վերջապէս գալիս է ծառայողը—Ահ! գոչում է սպասող պարոնը, դուք էք այն ծառան, որին ես ճաշը պատւիրեցի? Որքան մեծացել էք!

\*

Նստած եմ III կարգի կանանց կուպէում: Մի պառաւ քաջքշելով ներս է բերում իր ամուսնուն ու տեղաւորւում են:

—Սա կանանց կուպէ է, ասացի ես, երբ կանդուկաօրը գայ, ձեր ամուսնուն կը տեղափոխի:

—Ոչ, նա այդ չի անի, իմ մարդը կոյր է:

\*

Երիտասարդ կինը.—Ես էլ քեզ մօտ չեմ մնար, կը գնամ մօրս մօտ:

—Ահա քեզ ճանապարհածախսը:

—Բայց սա վերադարձի համար էլ չի բաւականայ:

\*

—Ինչ յիմար սովորութիւն, ամեն անցորդի բարևում եմ!

Ինչու?

—Մինչև վիզրիշը ելնելը զվորնիկ էի:

\*

Մինաս՝ Չէրքինադեանը կամենում է իր կնոջից ազատուել: Դրա համար էլ մի օր յայտ-

նում է իր կնոջը, որ գործով Ամերիկայ է գնալու: Նա ճանապարհորդուում է: Մի քանի օրից յետոյ կինը ստանում է հետևեալ հեռագիրը: «Մեր նաւը ամբողջովին, թէ բոլոր մարդկանցով և թէ բեռով խորտակեց: Ոչ մի մարդ չազատեց: Բարևներ Մինաս»:

\*

Ընկերը.—Ինչ, ես մեր գործով չեմ հետաքրքրուում: Անցեալ օրը չէր որ թանաքամանը գլխիդ խփեցի, որովհետև ապրանքը թանգ էիր գնել?

\*

Եթէ դու Վարսենիկի հետ ամուսնանաս, Սիմէօն, ես էլ քո քոյրը չեմ լինի: Նրա միլլիօները մեր հին անւան հետ չեն հաւասարակշռուի:

—Գիտես, Աննա, իմ մուրհակների վրայ նրա անունը ծանր կը կշռի:

\*

Սելօքեան ամուսինները շատ բաղդաւոր են և լաւ են ապրում:

—Իհարկէ, կինը ասում է «այո», ամուսինը «ամեն»!

#### ԾԻԾԱՂԵԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Մօտիկ ծանօթը աւելի լաւ է, քան օտարացած բարեկամը:

Ամուսնութիւնը — բաժանելու մի ճանապարհ է:

Ոչ մի բան այնքան դժւար չէ տանելը, քան մի շարք գեղեցիկ — աղջիկներ:

Մի աղջկայ բարոյականութիւնն է արդէն որ մի քանի երիտասարդների անկումն է յառաջ բերում:

Կանայք կեղծում են ամենից լաւ այն ժամանակ, երբ նրանք բացարձակ են վարում:

Հիմայ գրականութեան մէջ աւելի շատ քաջութիւն է հարկաւոր, քան տաղանդ:

Նախապաշարած հիւանդների համար էլ պէտք է բժիշկ հրաւիրել:

Շատ անգամ բաղդաւորութիւնը հեռանում է, իսկ նախանձը մնում է քեզ հաւատարիմ:

Մօզան մի յիմարի ճաշակ է — որը շատ խելացիներ հեռուում են:

Ամեն մի հանձար — անբարոյական է:

Ամեն մի հանձար ունի իր սեփական քերականութիւնը և գործիքները:

\*

— Չանձրացել էք դուք տիկին, մենակութիւնից?

— Այո, նաժանաւանդ, երբ հանգստանալ եմ ուզում...:

\*

Օրիորդը.— Պարոն ընցենդենտ, դուք կրկին ինձ կարգին խայտառակել էք լրագրում: Միթէ իմ մէջս չէք գտնում մի լաւ բան?

— Այո, բայց ես խօս չեմ կարող այդ հասարակութեանը պարզել...:

\*  
—Օրիորդ, ես ձեզ համար մի բանքիր եմ գտել փեսացու:

—Մի հատ այս թանգութեանը!

\*  
Դերասանուհի.— Պարոն զիրեկտոր ես պէտք է գանգատուեմ, որ դուք ինձ լաւ դեր չէք տալիս: Երեկ ես ամբողջ երեք ժամ բեմի վրայ էի գտնուում և ամբողջ, ժամանակ ոչ մի խօսք չը խօսեցի:

Դիրեկտոր.— Միթէ մի կնոջ համար դա մեծ գործ չէր?

\*  
Պարոն Ստեփանը գնում է երկու գեղեցիկ կարմիր վարդեր, որ իր կնոջը տանի:

Երեկոյեան ժամը 9ն էր. նա սպասում է մի տրամալի, մէկ էլ երկու փափուկ ձեռքեր գրկում են նրան և սկսում է համբոյրներ տեղալ. պարոն ստեփանը հազիւհազ ազատելով այդ կնոջ ճանկերից, որ դեռ շարունակում էր շոյել ու սիրել նրան, և բացատրութիւն է պահանջում. այդտեղ կինը յայտնում է.

—Ձէ որ նամակիդ մէջ գրել էիր որ տրամալի այս ստանցիայում կսպասես ինձ և իբրև նշան, որ ես քեզ ճանաչեմ, ձեռքիդ երկու կարմիր վարդ կբռնես! Եթէ իրաւի չպէտք է սիրես ինձ—ինչպէս խոստանում էիր նամակներումդ, տուր գոնեայ մի հատուցում, դու խաբերայ, անամօթ սրիկայ...

\*  
Ծառայ.— այդ հագուստիդ մէջ մեր աղէն քեզ աղջիկ պարոնի տեղ կը դնէ:

Աղախին.— Այո, այդ արդէն շատ անգամ է պատահել:

Ա Ր Ի Ի Ն Ո Տ Ա Ր Հ Ե Ս Տ

Ճաշարանում

Մսավաճառ.— Եթէ մին էլ պատերազմ լինի, ես անպայման կը գնամ:

Հիւր.— Ես էլ:

Մ.— Քեզ համար լաւ չի լինի. դու դեռ արիւն չես տեսել:

Հ.— Արիւն? Եւ ուրիշ ոչինչ?

Մ.— հա, չես վախենում արիւնից, եղբայր, արհեստդ ինչ է?

Հ.— Ես սափրիչ եմ:

\*

Մի մարդ որ յանկարծակի հարստացել է. — կարծեմ մեր գրացին շատ աղքատ մարդ պէտք է լինի.

— Ինչու?

— Որովհետև չի կարող մի մեխանիքական դաշնամուր գնել, և դրա համար իր աղջիկը ստիպուած է դաս առնել ու իր սեփական մատներով նւագել:

\*

Չորս գործողութեան մէջ մէկ սպանւող—  
և դրան էլ դրամա են կոչում:

\*

Մի խնձոյքի ժամանակ մի պարօն ցոյց է  
տալիս իր հարեանին մի կին և ասում է.

—Տեսնում էք այն տգեղ կնոջը, որ...

—Ներողութիւն ընդմիջում է նրան հա-  
րեանը. դա իմ կինս է: Պարօնը գլխի է ընկ-  
նում և իսկոյն վրայ է բերում.— բայց պէտք է  
դուք նախ իմ կնոջս տեսնէք!

\*

—Շուտ, եկ այստեղ, պարօն Ստեփան, մի  
գող մտնում է պատուհանից ձեր տունը:

—Ո՞րտեղ մարդ. կինս էլ պէտք է կարծէ թէ  
ես եմ:

\*

Չօրեղբայրս շատ հանաքչի էր: Մի օր երբ  
քոյրս իր ձաղատ գլխի հետ էր խաղում, ասաց  
նա. —հա, աւետարանում ասւած է, որ մեր  
գլխի մազերը մին—մին պէտք է համըլին—ես  
էլ Աստուծոյ աշխատանքը թեթևցրել եմ:

\*

—Ասա տեսնեմ, կը մտնես ինձ համար  
կրակի մէջ?

—Ինչ, կարծում ես ես հրդեաշէջ եմ:

\*

—Ուրեմն ուղիղ է դու արդէն ամուսնա-  
նում ես? Ես շատ ուրախ եմ!

—Իհարկէ, հաւատում եմ քո ուրախութեանը,  
գոնեայ կոնկուրենտներդ պակսեց:

\*

—Այո ամուսինս գնեց իմ գլխարկս:

—Մօղայից մի բան հասկանում է նա?

—Ոչ!

—Բաս ինչպէս է հասկացել, որ դա մօղնի է?

—Գնի բարձրութիւնից!

\*

Կոմս.—Ես շատ հին ազնւական ընտանիքի  
ժառանգ եմ և զիտես որ ժամանակից է սկսել  
մեր ցեղը ծաղկել?

Օրիորդ.—Ես կարծում եմ մօտաւորապէս  
այն ժամանակից, երբ որ մուրհակն է հնարւած:

\*

—Դուք էլ տանը էշ ունէք?

—Այո, բայց մամաս կամենում է նրանից  
բաժանուել!

\*

Անասնապարտէզի զիրեկաօրը ճանապար-  
հորդում է: Ճանապարհին նա մի նամակ է  
ստանում.—Բոլոր կենդանիները առողջ են, առ-  
հասարակ ամեն բան իրան կարգին է, միայն  
այն վերջի ստացած Գործիլա կապիկը զւարթ չէ,  
մեզ այնպէս է թւում որ նա մի ընկերի պա-  
հանջ ունի, կարգադրեցէք, ինչ անենք մինչև  
Ձեր վերադարձը!...

\*

—Ուրեմն դու տեսար խօսող ձիերին? Ինչպէս են նրանք խօսում?

—Շատ հասարակ, ինչպէս մենք մարդիքս, միայն մենք ձեռքերով ենք խօսում, իսկ նրանք ոտքերով:

\*

—Պարոն վարժապետ, իմ քոյրս կարմրուկ ունի:

—Շուտ գնա տուն, հրամայում է ուսուցիչը վախեցած, քիչ ժամանակից յետոյ յայտնում է մի աշակերտ.

—Պարոն վարժապետ, կարապետի քոյրը, որ կարմրուկով հիւանդ է այս քաղաքում չէ Բագու է!

\*

Յանկանում էի Բեթհոֆենի դիմակը գրնել, մտայ մի խանութ ուր երաժշտական առարկաների հետ նաև նօթաներ են ծախում, այնտեղ կանգնած կնոջը հարցնում եմ.

—Բեթհոֆենի դիմակը ունե՞ք?

—Ներողութիւն երկու ձեռքով թէ չորո՞ք?

\*

—Հա, ես հասկացայ, ասում է փոքրիկ Պետիկը հիւրերի մօտ ներս վազելով, ինչ է նշանակում մարդը և ինչ կինը, շատ հասարակ է դա: Մարդիք շալւար են հագնում, իսկ կանայք իւր-

կա: Բայց ինչ է իմ մամաս, չեմ հասկանում, նա երկուսիցն էլ սւնի հագին:

\*

Փոքրիկը տելեֆօնում. —մօրաքոյր, ես կակօ եմ խմում, դու էլ ուզում ես? և նա կակօն լցնում է տելեֆօնի մէջ: Բոլորը ծիծաղում են: Փոքրիկ Վիրգինէն ասում է.

—Ախ, Աստուած, ինչ յիմար ես դու, չէ որ դա մօրաքոյր ձկանջի մէջ է վազում:

\*

Ամուսնացած մարդը երբէք խաղալու չէ. եթէ նա տարեց կինը անպատճառ նրա հետ կը կուլի, եթէ տարեց, կը խլի նրա ձեռքից իր տարածը:

\*

—Ախ, Գարեգին, հաւատամ ձեր երգման?

—Գոնեայ այս գիշեր, խնդրում եմ!

\*

1. կին. —Դու խաղում ես մարդկանց հետ?

2. կին. —Դա շատ ստոր բան կլինէր—եւ ամենի հետ էլ լուրջ գործ ունեմ!

\*

—Ծիշտ է, Աշխէն, դու միմիայն ազնուկանների հետ ես շփուում?

—Միշտ էլ—մինչև կարգին բան գտնելը:

\*

Աները. —Շատ լաւ է որ դուք միմիանց սիրում էք. ուրեմն ես կտամ քեզ իմ աղջիկը և կը փոխառինեմ քո պահանջած փողը!

Փեսայ.—Ախ, պարոն Զանճալեան, եթէ դուք զժւարանում էք, այն ժամանակ փոխառինեցէք ձեր դուստրը և տւէք միմիայն փողը:

\*

Մի փոքրիկ երեխայ մօտ երեք տարեկան խաղում է տրամվայի գծերի վերայ: Մի 10 տարեկան աղայ դիտում է նրան: Ես մօտեցայ աղային և հարցրի.

—Փոքրիկը քո եղբայրն է?

—Այո!

—Ուրեմն հեռացրու նրան, եթէ ոչ տրամվայի տակ կընկնի:

—Ոչինչ, ճիշտ նոյն տեսակից մի օրինակ էլի ունենք մենք տանը:

\*

—Մի մերժէք, ամուսնացէք ինձ հետ, ես կլինիմ աշխարհիս մէջ ամենաբախտաւորը!

—Իսկ ես?...

\*

Տարօրինակ են փաստաբանները, նրանք ոչինչ չեն անում և այդ էլ երկար ձգձգում են!

\*

Դուք շատ բախտաւոր էք ձեր ամուսնու հետ, տիկին Բեարուբեան?

—Իհարկէ! Թող նա համարձակւի ինձ հետ անբախտ լինել:

\*

Օրբորդը.—Ինչ յիմար է այդ մարդը, ինձ

հարցնում է թէ ես սիրուց կը մեռնեմ... ինձ է հարցնում, ուր ես միայն սիրուց եմ ապրում...

\*

—Միմիայն ճանապարհորդութեան վերայ կարելի է մի քիչ կրթութիւն սեփականացնել:

—Դուք ճանապարհորդել էք?

—Շատ:

—Ուրեմն ինչու առիթից չէք օգտուել!

\*

—Մի վախիր, Անիշկա, եթէ մինչև անգամ քո ամուսինդ մեզ բռնի էլ. նա ոչ մի բան չի կարող անել, ես նրան 10,000 ըուբլի եմ պարտք:

\*

—Գիտես, Լիզա, երեկ երկու տիկիներ շատ վատ կարծիք յայտնեցին քո մասին, երբ դու իմ ամուսնուս յետ պարեցիր:

—Հա! և այդ երկուսից ով էր միւսը?

\*

Մի գեղեցիկ կոյսի աղօթքը.

«Սիրելի Աստուածը չի կամենայ

Որ ազնիւ գինին փչանայ.

Եւ որդը չէր որ տւեց մեզ ընդամեն,

Այլ և քաղցր ծառաութիւնը—ամեն:»

\*

—Պարի համար, օրբորդ, օդը շատ շոք է:

—Եւ վերջապէս, պարոն Կորկոտեան, ինչ որ դուք ինձանից պահանջում էք միւսնոյն է նա էլ ձեզ չի հովացնում:

\*

—Հիանալի էք դուք, պ. բժիշկ, ձեր դիմահանագուստում:

—Այո, ամբողջ կաստիլմն էլ իսկական է, միմիայն բացի մազից:

—Ախ, դուք այդ վերցրել էք ձեր տիկնուշից!

\*

—Դու որ երեսիդ դիմակ ես դնում, Մարթա, որպէսզի պարոնայք չը ճանաչեն պէտք է նաև ազդրդ դիմակաւորես!

\*

—Միշտ էլ այդպէս ես վարւում դու. նախ և առաջ վիրաւորում ես ինձ, յետոյ մօտենում ես քաղցր շողոքորթական խօսքերով:

—Բայց, սիրելի ամուսինս, ես խօսմ չեմ կարող նախ քաղցրիկ շողոքորթական խօսքերով մօտենալ քեզ և յետոյ վիրաւորել:

\*

Շարունակ մտածմունքով և նեղւելով եմ գնում քնելու.—Աղամը քնի մէջ կին ունեցաւ:

\*

Ուսանողուհի.—Տես դու փորձանքը, հօրաքոյրս ուղարկում է ինձ 20 բուբլի!

—Եւ դու այդ «փորձանք» ես անւանում?

—Իհարկէ, ես կամենում էի հէնց այսօր 100 բուբլի պահանջել նրանից!

\*

Մայրը.—Անամօթ և դու տւիր նրան, ինչ որ ես երկար ժամանակ պահանջում էի!

Աղջիկը.—Ես չըտուի —նա առաւ!

\*

Աղախին.—Պարոն, կերակուրը սառչում է: Պարոն—Ախ! եթէ միայն դուք չը սառչէիք!

\*

Անգլիական թագաւորը յայտնում է, որ կամենում է մի հին պալատ տեսնել:

Աւերակների պահապան—դռնապանը երկու թուլթակ է ունենում: Մէկը աշխատասէր, միւսը ծոյլ: Առաջինին սովորեցնում է նա հետևեալ խօսքերը. «Աստուած կեանք տայ թագաւորին»:

Երբ թագաւորը պալատը տեսնելուց յետոյ մտնում է դռնապանի սենեակը, թուլթակը ըսկսում է. «Աստուած կեանք տայ թագաւորին, Աստուած կեանք տայ թագաւորին, Աստուած կեանք տայ թագաւորին...»

Թագաւորը կանգ է առնում զարմացած և չէր կարող իր ծիծաղը զսպել, եթէ յանկարծ ծոյլ թուլթակը մէջ չընկնէր, հետևեալ խօսքերով.

—Չայնդ կտրիք, հիմար աւանակ!

\*

—Իմ նշանածս չեկաւ, ինձ այսքան սպասեցնել տւեց և հէնց երեկ էր որ խոստացաւ,

ինձ համար մինչև աշխարհիս ծայրը գնալու!

—Մի գուցէ նա արդէն սկսել է!

\*

—Այսօր ես քեզ կը ձանօթացնեմ իմ ամուսնուս հետ, բայց դու այնպէս ձևացիր, իբրև թէ կանանց թշնամի ես, նա այդ բանը շատ է սիրում!

\*

Տիկին(գիշերը տուն վերադառնալով, տեսնում է իր տան մէջ մի գող, որ նրա արգն ու զարգն է հաւաքում)։ — Տխմար մարդ, չը գիտէ թէ իւր հաւաքածը և մինչև անգամ եթէ ինձ էլ ամբողջովին տանէ, բոլորը կեղծ են:

\*

Տիկին.— Գլուխս պատուում է, պարոն բժիշկ, սիրտս թռթռում է, ամբողջ մարմինս կարծես... իսկ մտքերս մելանքօլիկական են, վերջապէս, կարող էք մի ըեցեպտ գրել?...

Բժիշկ.— Այո, ես մի ըեցեպտ կը գրեմ ձեր ամուսնու համար:

\*

Իգական պաշտօնեայ.— Դուք ասում էք որ մենք ձեր հացն ենք կտրել, լաւ ենք անում, ինչու չէք ամուսնանում մեզ հետ որ?...

\*

Արամ.— Ինչ խորհուրդ ես տալիս, ամուսնանալ մի աղքատ աղջկայ հետ, որին ես սիրում եմ, թէ մի հարուստ այրիի հետ, որին ես չեմ սիրում?

Բագրատ.— Սէրը Աստուծ է, սէրը կենաց աղն է, բարեկամ, և առանց նրան բոլոր աշխարհը փուչ է, սէրը աղքատներին հարստացնում է, աշխատանքը քաղցրացնում է, երկիրը երկինք է...

Ա.— Բաւական է! Ես աղքատ աղջկայ հետ կ'ամուսնանամ, որին ես սիրում եմ...

Բ.— Շատ լաւ ես խօսում, բրաւօ, բայց միևնոյն ժամանակ տուր ինձ այն հարուստ այրիի հասցէն, որին դու չես սիրում:

\*

Հարս.— Օհ, պարելու ժամանակ զգեստս էլ կոխեց ու պատռեց, ոչ, ես նրա հետ կ'ամուսնանամ, բայց ուրիշների հետ կը պարեմ:

\*

Սիրուհի.— Դու չես կարող ըմբռնել, թէ որքան տաք է իմ սէրը քո հանդէպ!

— Հա, դրա համար է որ իմ փողս այդպէս շուտ է հալւում նրա մէջ!

\*

— Պարոն վարժապետ, դուրս ելնել կուզեմ:

— Այդպէս չէ, կասեն, պարոն վարժապետ կարող եմ դուրս գնալ: Իբրև պատիժ, մի քանի րոպէ պէտք է սպասես. (10 րոպէից յետոյ). — հիմայ կարող ես դուրս գնալ:

— Պարոն վարժապետ, ես արդէն դուրս գնացի:



\*  
— Դու պէտք է մեր գործարանի գարեջրից գործածես, նա լաւ կը գիրացնի և...

— Բայց ես կամենում եմ բարակ մնալ:

— Նա կը բարակացնէ էլ!

\*  
Սովորութիւն.— Դեռ նոյն փող փչողն է ձեր սիրահարը, օրիորդ?

— Այո, բայց մի վատ սովորութիւն ունի նա, ինձ համբուրելուց յետոյ, կամենում է ինձ շուռտալ ու թափել:

\*  
— Ինչպէս որ կինս հեռացել էր կարօտից նեղուում էի!

— Իսկ հիմայ երբ նա վերադարձել է?

— Կրկին ցանկանում եմ կարօտից նեղուել!

\*  
Գերեզմանատանը կարդում եմ հետևեալ տապանագիրը.

«Այստեղ հանգչում է իմ սիրելի ամուսինս: Հանգիստ ոսկորներիդ—մինչ կրկին տեսութեան»:

\*  
— Պարոն երաժիշտ, ինչու դուք էլ երկար մագեր չունէք, ինչպէս բոլոր հանձարները, որ խումբը կառավարելու ժամանակ օրօրւեն դէս ու դէն?

— Ոհ, անտանելի է. ես ատում եմ այնօրւանից, երբ խումբը կառավարում էի և գլուխս

շարժ էի տալիս յանկարծ ընկաւ գլխիցս անիծւած պարիքս և խայտառակեց ինձ ամբողջ ժողովրդի առջև:

\*  
Սովորիչ.— Ահա ես ձեր բեխերի կէսը թրաշեցի, տեսէք, եթէ չէք հաւանում...

\*  
Բժիշկ.— Տիկին, ձեր դրութիւնը ինձ հանգստացնում է:

— Զարմանալի բան: Միթէ դուք արդէն այդչափ ծերացած էք?

\*  
Տէրտէր.— Բայց ինչու էք դուք ձեր կնոջ թաղման օրը այդպէս հարբել?

— Առանց հարբելու, տէր հայր, բոլորովին չեմ կարող լաց լինել!

\*  
— Չէ որ դուք արտաքսւած էք, ինչու էք կրկին այստեղ եկել?

— Այո, բայց ես չեմ կարող օտար ոտիկանների հետ հաշուել:

\*  
Կինը.— Երբ ես շամպայներ եմ խմում, ամբողջ աշխարհը գեղեցկանում է. և երբ ամբողջ աշխարհը գեղեցիկ է, ստիպւած եմ շամպայներ խմել...

\*  
Մի ջահել աղջիկ ամուսնանում է մի ընկած, անբարոյական մարդու հետ: Նրանց հար-

սանիքում երաժշտութեան կարգադրութիւնը յանձնուած էր կառավարիչին: Հարսանիքի վերջը երբ նորապսակ զոյգերը հեռանում են, խումբը նւագում է մի մարշ նրանց յարգելու համար, այդ լինում է—Շօպէնի թաղման մարշը:

\*

Երկու պարոն կանգնած են երեկոյթում և դիտում են պարողներին:

—Օհ, բարեկամ, ասում է մինը, տես այն տիկնոջը, այ-այ, որը պարում է, տես վզի վրայ մի խալ ունի, ես հարիւր ըուբլի կըտայի, եթէ թոյլ տար ինձ համբուրել այդ խալի վրայ, տես այ այն տիկինը...

—Այո, ես տեսնում եմ և լաւ եմ ճանաչում, նա իմ կինս է, գիտես, ճիշտ նոյն տեղը ես էլ մի խալ ունեմ, ես միայն կէսը կը պահանջեմ—իմ խալս համբուրիր:

\*

—Այս ինչ գեղեցիկ անձրևնոց է, որտեղից ես գնել?

—Հա, սա մի զարմանալի դիպւածքով է ձեռքս անցել: Երբ անցեալ օրը անձրևին տուն էի գալիս, որպէսզի շատ չը թրչւեմ և մի քիչ սպասեմ որ անձրևը քիչանայ, մտայ մի տան պարիսպի տակ: Մէկ էլ մի երիտասարդ եկաւ այս անձրևնոցը ձեռքին և որովհետև դէպի մեր տունն էր գալիս, մտածեցի օգտել նրանից, մօտեցայ երկտասարդին և հարցրի.

—Ուր էք գնում այդ անձրևնոցով?  
Մէկ էլ հովանոցը վար ձգեց ու փախաւ:

\*

—Ինչի էք այդպէս զայրացած պ. Անար-ժանեան?

—Երևակայեցէք, ահա երեք ժամ է կինս գնացել է իր համար շեղական ձեռնոցներ գընելու և դեռ չէ վերադարցել—չը լինի թէ ուղիղ Շեղեայ է գնացել:

\*

Մի չամուսնացած մարդ ասում է.—Դուք շատ հիանալի էք, կանայքդ, շատ գեղեցիկ էք, բայց չը պէտք է և մօռանաք, որ ձեր գարնան հետ, ձեր ձմեռն էլ պէտք է գնենք:

\*

Պ. Յակոբը նշանւել է: Շնորհաւորանքից յետոյ իր ընկերը ասում է.

—Մի փունջ պէտք է նւիրեմ քո նշանածին!

—Շատ բարի:

Քիչ յետոյ մօտենում է ընկերը պ. Յակոբին և ասում.

—Կամենում ես նշանածիդ մի ուրախութիւն պատճառել?

—Շատ սիրով!

—Դէհ ուրեմն, տուր ինձ երկու ըուբլի մի փունջի համար:

\*

—Տես ինչպէս դժգոյն է լուսինը երկնքում:

—Հա, երևի նա էլ անքուն գիշեր է անցկացրել:

\*

Մի հարբած մարդ մտնում է թատրոն և մի տոմսակ պահանջում: Կասսիրը նրան չի տալիս:

—Ինչու չես տալիս? Ես էլ փող պիտի վճարեմ, ասում է հարբածը:

—Միկնոյն է, ձեզ ներս չեն թողնի:

—Ինչու?

—Որովհետև դուք հարբած էք:

—Կարծում էք եթէ հարբած չը լինեմ, կը դամ ձեր թատրոնը:

\*

—Ես շատ եմ զարմանում, հարևանուհի, որ դուք ձեր ամուսնուն շարունակ իր հօրեղբոր-աղջկայ հետ մենակ էք թողնում!

—Օհ, այն տգեղուհին!

—Այդպէս մի մտածէք, երևում է որ ագեղուհիները նրա իսկական ճաշակն են:

\*

Աւազակները թալանում են մի հրեայի: Ունեցած փողերը կողոպտելուց յետոյ, կամենում են նաև մի քանի հատ արծաթ մանեթանոցներն էլ խլել, բայց հրեան այս անգամ յետ առնելով այդ արծաթ փողերը, ասում է.

—Պարոնայք, որտեղ էլ որ ես կանխիկ վճարեմ, միշտ էլ 4<sup>0</sup>/<sub>0</sub> զիճում ունեմ:

\*

—Ինչ ասեց կի՛նդ, երբ դու երէկ կէս գիշերին տուն վերադարձար?

—Աւելի լաւ կլինի մի երկու շաբաթից յետոյ հարցրու ինձ այդ մասին, մինչև այն ժամանակ մի գուցէ կինս իր խօսքը վերջացրած լինի:

\*

—Մեր աղջիկը լաւ է ծախում, ամեն բան սաղացնում է:

—Միայն իրան չէ կարողանում սաղացնել:

\*

Հին փորձառութիւն է սա. փնտրում ես երեկոյթներում մի անկիւնում հանգստութիւն — փոքրիկ սուս ու փուս անկիւններում, ամենից շատ փոթորիկ կայ...

\*

—Դէ, խեցգետին էլ պատւիրէ որ շամպայները հետ ուտենք:

—Բայց ես շամպայներ չեմ պատւիրել:

—Միթէ խեցգետինը չոր-չոր պէտք է ուտենք?

\*

Մի մեծ կօշկավաճառատան առաջ կանգնած է մի փոքրիկ մանչուկ և բղաւում է.

—Շնուրօքի, շնուրօքի, վեցը մի արասի!  
Մօտեցայ նրան և հարցրի թէ ինչ արժէ  
մի զոյգը:

—Ես միայն պարտիով եմ ծախում, պատասխանեց նա, մտէք այդ խանութը, այնտեղ կարող էք հատով գնել:

### ԳԱՂՂԻԱԿԱՆ ԱՅՕՐԻՉՄՆԵՐ

Երջանիկ ամուսիններ! Մարդը խուլ, կինը կոյր:

Հայելին անպէտք է—եթէ մարդ մի քիչ ուշ մէջը նայի:

Կինը նմանում է շուքին. վազում ես նրա յետևից —նա փախչում է, փախչում ես նրանից—յետևիցդ է վազում:

Եթէ ամեն ջանել աղջկերք խոստովանեն ճշմարտութիւնը, այն ժամանակ մարդ կը դարձանայ թէ ինչ է ներշնչում նրանց սէրը:

Շատ երիտասարդ աղջկերք իրանց տարիքը մեծ են ցոյց տալիս, բայց նրանք զրա վրէժը առնում են, երբ որ մեծանում են, այն ժամանակ տարիքը փոքրացնում են:

Մօզան հնարում է կինը իւր սեփական սրխալները ծածկելու համար կամ ուրիշների սրխալը երևան հանելու համար:

Եզիճներ և աղջիկները մի նմանութիւն ունեն. նրանք աւելի քան ինչ ծածկեն, եթէ քա-



ջութեամբ մ'օտենաս նրանց:

Քո գրպանիցդ կախում ունի, թէ մի կին քո յանձանքներիցդ որքանն է ներում:

Կանայք զարդարում են առնայտարակ կամ մէկին դուր գալու համար և կամ հակառակ նրան:

\*

Կայարանում մի կին իւր երեխային ճանապարհ է գծում դէպի ուրիշ քաղաք ուսանելու: Մայրը խրատներ է տալիս.

—Գիտես, որդեակս, ոչ մի տեղ չը պէտք է գնաս, երբ կարող ես մտածել, որ այնտեղ չես կարող ինձ հետ գնալ:

—Մամա, պատասխանում է որդին, իսկ եթէ ինձ տանեն տղամարդկանց լողարանը!

\*

Մեր փոքրիկ Վիկտորիկին հարցնում եմ.  
—Ինչ ես կամենում քո ծննդեանդ օրը?  
—Կաթնապուր և այդ առաւօտը չը լացւեցնել! Եղաւ նրա պատասխանը:

\*

Օրիորդ.—Ամուսնութեան համար պէտք է մեծ քաջութիւն ունենալ:

—Այո, և տղամարդիկ էլ շատ վախկոտ են:

\*

—Երևում է որ երգչուհին ձեզ շատ դուր եկաւ?

—Ոչ, ես միայն ուրախ եմ, որ յայտարարւած է. «Միակ կօնցերտ»:

— Տես, Վարսենիկ, այս թերթում գրեա՞ծ է արշաւահանդէսի մասին սրանք ինձ պէտքական են:

— Իսկ տես այստեղ, Գալուստ, ինչ գեղեցիկ զգեստ է նկարած—ես ուզում եմ այս անպատճառ ունենալ:

Փողոցում սիգարի մնացորդ հաւաքողը.

— Ժամանակները շատ են փչացել, մինչև անգամ սիգարի մնացորդները քանի գնում կարճանում են:

Ճաշարանում.— Ամբողջ ժամանակ նրանք Գաղղիերէն խօսեցին, որ չը հասկանանք թէ կուտւմ էին, հիմայ էլ մինչև անգամ չի կամենում կնոջ վերարկուն բռնել, որ հագնի:

Մի գրքի անյաջող վերնագիր.

«Ամեն մարդ իր սեփական անասնաբոյժը»:

Այն պարոնը, որ կամենում է հաշւապահի պաշտօն ստանալ մի ուժեղ կամօքի տէր մարդ է երևում:

— Հա, որքան աշխատանք պէտք է ջանք գնենք նրան դուրս անելու ժամանակ:

Ինչեր են կեանքի մէջ երբեմն միտքս գալիս

Մարդուս ամենից հաւատարիմ մտածմունքն է, նա երբէք չի հեռանում, որքան էլ դուրս թիւնդ վատանայ:

Ջուրն էլ կը պղտորի, եթէ փիլիսոփան մէջը նայի:

Եթէ մարդ կեանքի մէջ չը խաբւէր— երբէք ընկեր չէր ունենայ:

Ով որ ապերախտութիւնը աչքի յառաջ չի առնում— ուրեմն նա կեանքի մէջ փորձառութիւն քիչ ունի:

Սէրը շատ անգամ աչքի ցաւ է— նա կուրացնում է սիրեցեալի պակասութիւնները:

Դրամատուրգները ուզում են կեանքի դաժանութիւններով առուտուր անել:

Մի քօքեթ կին կամենում է սիրւած լինել. մի խղճամիտ կին բաւականանում է միայն երբ իրան հասկանում են:

Լեզուն տրւած է մարդուն, որ իր անմտաձողութիւնը ծածկէ:

Տալը առնելուց բարի է— ներելն էլ բարի է, քան սխալ հասկանալը և վիրաւորելը:

Սէրը մի նուրբ ծաղիկ է. ամուսնութիւնը ցող է փռում նրա վրայ:

Այն բանը թէ կանայք սիրում են և սիրւած են, աւելի շատ է պատահում, քան կար-

ծուժ ենք: Միայն քիչ է պատահում, որ սիրողը ու սիրւողը նոյն անձնաւորութիւններն լինեն:

\*

— Բաս զու կամենում էիր կնոջիցդ բաժանել?

— Այո, բայց մենք յետաձգեցինք: Հիմայ բարեկենդան է, միևնոյն է առանց այն էլ իրար երես քիչ ենք տեսնում!

\*

Խաղում էին «Մարիայ շտուարտ»: Բոլոր զերերը յարմար բաժանելուց դա՛տ, գերասանները լաւ էլ էին սովորել իրանց զերերը: Նամանաւանդ մի խաղացող այնքան լաւ էր սովորել, որ ոչ մի բառ բաց չէր թողել. այս բանը հաստատում է մօնօլօգը, որը վերջացնելուց յետոյ աւելացնում է. «Դուրս միջին դռնից» և անյայտանում է ձախ դռնից:

\*

— Խեղճ մարդ! կոյր էլ ծնւել էք?

Մուրացկան. — Այո, և խլացայ երբ այդ բանը նկատեցի!

\*

— Այս գրիչը շատ լաւ է գրում և երբէք չի փչանայ, սորանով դուք կարող էք գրել — որքան որ ապրում էք!

— Շատ բարի, տւէք ինձ մի հատ:

— Մի հատ? Աւելի լաւ չի լինի գնեցէք մէկ գրոս!

\*

Այս ատրճանակը մի անգամ իմ կեանքը փրկեց!

— Ինչպէս? Շատ հետաքրքիր է իմանալ!

— Հա, մի անգամ ես սաստիկ քաղցած էի, բոլորովին յուսահատւած, ոչ մի կոպէկ չունէի մօտս և այդ ատրճանակը տարայ — ու գրաւ դրի!

\*

— Չէ, այլևս չը պէտք է հարբեմ! Գլուխս այնպէս է դմրել, կարծես թէ շատ եմ աշխատել:

\*

Խանութպանը (տեսնելով իր հաշւապահին բանաստեղծութիւններ գրելիս).

— Անամօթ! իմ հաշւիս համբաւ ունենալ ես կամենում!

\*

Հիւրը (ճաշարանում). — Խնդրեմ բերէք ինձ բաց նամակ, թանաք ու գրիչ և պոստային արկղը:

\*

Տէր. — Պողոս, միւս ամսի մէկից սկսած երեք բուբլի աւել կստանաս — բժիշկը ինձ արգելեց ծխել:

\*

— Չմեռը 70, իսկ ամառը 80 տարեկան եմ

որպէսզի մեզ մօտ ամառանոց գալողները տեսնեն, թէ որքան առողջ օդ ունենք մենք:

\*

Տէր. - Կոստի, չես իմանում, քանի անգամ կանչեցի:

Ծառայ. - Ներողութիւն, պ. Օհանիսեան, կարծեցի թէ կառապանին էք կանչում: Դուք «Կոստի» բղաւեցիք:

\*

Կինը. - Մի նոր գլխարկը նոյնն է, ինչ որ մի նոր ֆլիրտը\*), սկզբում զանում ենք նրան հիանալի, բայց և այնպէս հաստատ համոզւած ենք, որ կէս տարուց յետ նրանք այլևս անտանելի են դառնում մեզ:

\*) Ինչ է նշանակում ֆլիրտ, ես ինքս էլ չգիտեմ, ամեն տեսակ բառարաններ թերթեցի, ոչ մէկի մէջ չգտայ այդ խօսքի բացատրութիւնը: Թողնում եմ ձեզ, ինչպէս կամենում էք, այնպէս էլ հասկացէք: Գիժ-գիժ գրող գիժ:

## ԵՐԲ ՈՐ ԿԻՆԸ

### ԿԱՍԿԱԾԻ . . .

(Սեւ քողը)

ԷՐԴՄԱՆ ԳՐԷՋԵՐ

Առանց ցաւի թէ սէր ըլլայ, չէ կարելի  
Այնուհանդերձ դարձեալ սիրով  
աշխարհս է լի:

Գիժ

Մի խրատ.— երբ որ կինը կասկածանքի  
մէջ ընկնի, էլ հեշտութեամբ չէ կարելի նրա  
կասկածը փարատել:

Մի օր մեր տան մէջ մի սև քող գտնուեց:  
Նա այնքան տգեղ էր, որ աւելի շուտ կարելի էր  
մի պառաւ կնոջ մազի տոպրակ անւանել: Ինչ-  
պէս որ կնոջս բնաւորութիւնն է— նրա այդ  
տանտիկնական առաքինութիւնը ես բարձր եմ  
գերադասում— խղճմտանքով հարցնում էր բոլոր  
բարեկամներին և ծանօթներին, որպէսզի գտնէր  
սև քողի տիրուհուն:

Բայց արի տես որ զժբախտաբար ոչ ոք չէր  
կամենում տէր դառնալ կամ սուտեր հնարելով  
սեփականացնել իրան այդ ջնջանք, որպէսզի  
դրանով նրա գաղտնիքը լուծւէր:

Ուրեմն մեզ մնում էր այդ անտիրական  
լաթը կամ պատուհանից դէն շարտել և կամ մէ-  
կին ընծայել: Բայց երբ ես իմ այդ կարծիքս





յայտնեցի, կինս կասկածանքով ձեռքիցս խլեց սև քողը, ծուռ-ծուռ երեսիս նայեց և ապա խօսեց.

— Հա! Ես հասկացայ! մտքիցս էլ անցաւ!

— Ինչը?

— Ինձ խենթ մի կարծիր! Դու ինձանից գաղտնիք ունես!

— Գաղտնիք?

— Սա «նրանից» յիշատակ է, չէ? Ես դեռ ապուշի նման նայում էի նրան առանց մի որևիցէ բան հասկանալու, իսկ նա շարունակեց.

— Դու միշտ էլ այդպէս ես եղել!...

— Խնդրեմ! ինձ հետ աւելի պարզ խօսիր!

— Ոչ!

— Ոչ? Իսկ եթէ այդ լաթի տէրը քեզ յայտնի լինի, դու ինձ հանգիստ կը թողնես?

— Ուրեմն դու խոստովանուում ես, որ...

— Ինչ եմ խոստովանում?...

— Որ դու ինձանից գաղտնի «սիրուհի» ունես!

— Այո, և ամբողջ մի շարք! Ու ամեն միսն էլ ինձ մի մի սև քող են պարզեում!

— Կեղծաւոր! էլ ինչի ես կարմրում?

— Բարկութիւնիցս! Որ օրէնքով և ինչ հիման վրայ սուտեր ես հնարում, ինձ զրպարտում: Կարծում ես ես ժամանակ ունեմ սիրուհիներ պահելու?

— Բայց չէ որ ինձանից առաջ դու ուրիշին էիր սիրում!

— Բաւական է, և եթէ այդ յիմարութիւնը իսկոյն եթէ չը վերջացնես, կը վերցնեմ զլիարկս ու կը հեռանամ!

— Այո գնա, գնա նրա մօտ, ես էլ գիտեմ ինչ կանեմ! ու նա սկսեց լաց լինել:

\* \* \*

Կարծելով թէ ամեն բան մօռացեց, միւս օրը ուրախ-ուրախ գնացի տուն ճաշելու, բայց ճաշին ներս մտայ և հազիւ բարևեցի, սատանան գարձեալ սկսեց.

— Ինչու այսօր շուտ տուն եկար?

— Միթէ ճաշը դեռ պատրաստ չէ?

— Պատրաստ է բայց...

— Էլ ինչ բայց?

— Ոչինչ, ոչինչ!!!

Մէկ էլ որսորդական շան նման մօտեցաւ ինձ ու սկսեց հոտոտել:

— Ինչ ունես? հարցրի ես հետաքրքրութեամբ:

— Այս ինչ պարֆիւմի հոտ է գալիս քո հագուստի վրայից?

Նախ և յառաջ ես ինձ հոտոտեցի ու ապա պատասխանեցի.

— Այսօր առաւօտ սափրիչի մօտ էի:

— Օօօ, արտասանեց հեգնական ծիծաղով, բա ուրիշ անգամ այդ հոտը ինչի չէի առնում?

—Մի գուցէ դու հարբուիս էիր!

—Լաւ ճօրպիկութեամբ ես խուսափում!

—Սուսափելու սչինչ չը կայ, բոռացի ես վերջապէս!

—Ամեն բան կը պարզուի! ասաց նա այնպէս կարճ և ազդու, կարծես լեզիս պատառ-պատառ պիտի լինէր:

—Ես այսօր խանութներում հարցրի, շարունակեց նա մատը թափ տալով, ինձ ասացին, որ սա վերջի մօզայի գաղղիական քող է!

—Անէճք երեք սատանայի անւամբ! շատ էլ պէտքս է, բայց զիտցիր որ այդ լաթը խելքդ գլխիցդ կը հանէ:

—Հա, ճիշտ, այսօր ես մի վէպ կարդացի, որտեղ գրած էր ինչպէս մի մարդ իւր կնոջը խենթանոց է ձգում, որպէսզի իւր սիրեկանի հետ ամուսնանալ կարողանայ:

—Ես կրկնում եմ վերջին անգամ, կը վերցնեմ գլխարկս ու կը փաղչեմ! բոռացի ես յուսալատւած:

—Հա!? Ուրեմն դու հաստատում ես?

Ու այսպէս միջնեց կրկին մի օր:

\* \* \*

Առանց մի որևիցէ չար մտադրութեան միւս օրը ճաշին մի քիչ ուշացայ:

—Ձը կարողացայ մի բոպէ առաջ գալ, հաւատացրի ես նրան:

—Ներողութիւն խնդրել հարկաւոր չէ, բարկացաւ նա, անտանելի է ինձ համար ամեն օր նոր-նոր սուտեր լսել:

—Դարձեալ ես սկսում, միթէ ամեն օր պէտք է այսպէս շարունակուի? ես կարծում եմ երեկւանը և անցեալ օրւանը բաւական է!

Այս անգամ նրա զարհուրելի հայացքները ուղղւած էին հագուստիս վրայ:

—Ինչ, կրկին մի ինչ որ բանի հոտ է գալիս?

—Ախ ոչ, բայց թոյլ տուր տեսնեմ! այս ասելով մօտեցաւ ինձ, բարձրացրեց ձախ թևս և մի երկար մազ քաշեց հագուստիս վրայից ու յաղթութեամբ ասաց.

—Երբ ես երեկ քո վրայից պարֆիւմի հոտ առայ ինձ խելագարի տեղ դրիր և ասում էիր, իբր թէ իմ զգացմունքներս ինձ խաբում են կարող ես հիմայ էլ նոյնը հաստատել? ու նա մազը մէկ աջ, մէկ ձախ էր թոցնում:

—Տուր ինձ, ես իսկոյն հաստատեմ որ սա քոնն է!

—Քեզ տամ որ ձեռքիցս խլեմ չէ? Ձէ որ իմ մազերը խարտեաշ են իսկ սա սև է, սորանով ես վաղը դատաստանական քիմիագէտի մօտ կը գնամ:

—Քո մազերը ոչ թէ խարտեաշ, այլ շաքանակագոյն են և այդ մազը նոյնպէս շաքանակագոյն է և ոչ թէ սև:

—Վաղևայ քննութիւնը կը վճռէ քո բոլոր ասածները:

—Իզուր ծախսերի տակ մի ընկնիր, ես ինքս յայտնում եմ քեզ, որ իմ սիրունիս կարմիր մագեր ունի!

Ապուշի նման մէկ երեսս նայեց, յետոյ մօտեցաւ պատուհանին, բռնեց ձեռքի մագը դէպի լոյսը և ասաց.

—Ս,յո! Սա էլ կարմիր է եղել!

—Տեսնում ես, եթէ ես կանաչ ասէի, քո աչքերին մագն էլ կանաչ կերևար. նախանձութիւնը քեզ բոլորովին կուրացրել է!

\* \* \*

Ամբողջ գիշեր կինս լաց եղաւ: Առաւօտեան երբ ես նրա գունատ երեսը տեսայ սաստիկ խղճահարուեցի:

—Հոգեակս, միթէ խելքի չպէտք է գաս, չէ որ թէ քո և թէ իմ կեանքը դառնացնում ես դրանով: Երբեկիցէ պատճառել եմ այդպիսի կասկածանքներ, որ հիմայ էլ ուզում ես հաւատալ, թէ ես քեզ անհաւատարիմ եմ գտնւում?

—Ես էլ չեմ—կարող—երկար—տանել ... կըծքիս յենուելով հեկեկաց նա, միայն—եթէ հաս—տատ—գիտենայի?

—Ս,յո բոլորը խելագարութիւն է, հաւատացիր:

—Ոչ, ոչ, ամենայնդէպս մի բան ուզիդ կը լինի, բայց կարելի է դեռ այն աստիճան վատ չէ!—

—Աստուած իմ! ինչով կարող եմ քեզ մի կերպ հանգստացնել!

Նա ցնցւեց.— կարող ես երգել?

—Ս,յո!

—Ուրեմն կրկնիր հետեւեալ խօսքերը, կամենում ես?

—Ս,յո!

—Թող— — —

—Թող— — —

—Մատգ բարձրացրու. ուրեմն, թող յանկարծակի վայր գլորուեմ...

—...Վայր գլորուեմ...

—...Եւ մեռնեմ...

—...Մեռնեմ...

—...Եթէ ես մի սիրունի ունեմ:

—...Սիրունի ունեմ. վերջացրի երգումս? կը թողնես այսուհետև ինձ հանգիստ, տեսնում ես, որ ես դեռ ապրում եմ!

Մի քիչ տօնական ձևով խմբեցինք մեր առաւօտեան սուրճը: Բայց մնաս բարեկի ժամանակ, երբ կնոջս համբուրեցի, վզիցս փաթաթուելով ասաց.— վախում եմ...

—Ինչու նազելիս?

—Զրլինի թէ մի բան պատահի քեզ, եթէ յանկարծ վայր գլորուես և մեռնես! ասաց ամաչկոտ և մի քիչ էլ խնդրանքով:

—Քո կարծիքով ուրեմն ես սուտ երգուեցի,

հիմայ խօմ տեսնում ես, որ դու խելագարուել ես և քեզ անպայման շղայինների հիւանդանոց է հարկաւոր: Այս բաները շուտով պէտք է վերջանան, շարունակեցի ես, համբերութիւնս կորաւ և որպէսզի կերածս հարամ չլինի ես այսօր ճաշին չեմ գար!

— Որովհետեւ ճաշին դու նրան ես խօսք տւել, ասաց կինս թշնաբար, գնա, գնա ու ինձ խաբիր!

— Ոչ, շուրը կնկնեմ և դու այլևս ինձ չես տեսնիլ! ասացի, դուրս ելայ, յետևիցս էլ դուռը պինդ խփեցի և գնացի գործիս:

\* \* \*

Երբ ես երեկոյեան քաղցած, գայրացած ասուն վեոադարձայ, մեղմ, հանդիստ և ուրախ դէմքով դիմաւորեց ինձ կինս և ասաց.

— Խնդրում եմ ներիր ինձ, ես անարգար գտնուեցայ քո դէմ: Միննա հօրաքրոջիցս մի նամակ ստացայ, որտեղ խնդրում է վերադարձնել իրան այդ քողը, որովհետեւ նրան է պատկանում:

— Եթէ Միննա հօրաքրոյրդ մին էլ այստեղ երևայ, գիտցիր, որ պատուհանից դուրս կը շարտեմ:

— Մի գայրանար, շողոքորթում էր կինս:

— Աւելի լաւ կըլինի եթէ ինձ համար կեղտուկ բերես, ես սաստիկ քաղցած եմ!

Ու մեծ ախորժակով կերայ տաքացրած կերակուրը — — — — —

Երբ կնոջս ամեն մի փորձը, ինձ կրկին ուրախացնելու, գուր անցան մեղմ հարցրեց նա.

— Այսօր մի բան կերել էիր?

— Այո!

— Ճաշարանում?

— Ուրիշ որտեղ?

— Այնպէս հարցրի!

— Ձէ դու կարծում էիր սիրունուս մօտ?

— ? !

Քիչ յետոյ կրկին ինձ մօտենալով, ձեռքիցս բռնեց և աղաչելով խօսեց. — Էլ ոչ մի հարց չեմ տար և չեմ չարչարի քեզ, միայն ասա ինձ, պատուիդ և խղճիդ համաձայն, դու էիր խնդրել Միննա հօրաքրոջս, որ նա ինձ այս նամակը գրի?

Ես զգում էի որ պէտք է խելագարւեմ: Մի հնար պէտք էր գտնել, որ այդ չար դրութիւնից վերջապէս ազատւէի:

Եւ ես յանկարծ յիշեցի որ հիւանդին համոզելու համար պէտք էր առերես այնպէս ձեւանալ, իբր թէ նրա գաղափարների հետ համաձայն ես:

— Այո ես խնդրել էի Միննա հօրաքրոջդ:

— Ուրեմն դու սիրունի ունես?

— Այո ունեմ!

— Կարմիր մազերով?



— Կարմրախարտեաշ մագերով!

— Ուրիշ ինչ տեսք ունի նա?

— Հաստ է!

— Ինչ տեսակ աչքեր ունի?

— Կանաչ!

Կարճ միջոցից յետոյ շարունակեց. —  
հիմայ ինչ պէտք է լինի մեր երկուսիս հետ?

— Չը գիտեմ!

— Կարմրախարտեաշ! ասաց կինս կասկա-  
ծանքով, բայց մազը սև էր!

— Ես սև մագերով սիրուհի էլ ունեմ!

— Սուտ է!

— Այո!...

Եւ նա բարձր ծիծաղեց.

— Ախ Աստուած, թէ գիտենայի քո ասած-  
ներից որն է ճշմարիտը?...

Ես ուսերս վեր քաշեցի և յետոյ աւելացրի  
աւելի լաւ կլինի գնանք քնելու, ես սարսափելի  
յոգնած եմ! — — — — —

Եւ մենք գնացինք քնելու:

Ու յիրաւի միւս օրը կինս ինձ հանգիստ  
թողեց:

Իայց եթէ չեմ սխալուում այսօր կամ վաղը  
կրկին պիտի սկսէ սիրուհուս մասին խօսել, որով-  
հետև մինչև հիմայ էլ մեծ կասկածով պահում  
է սև քողը, որպէսզի մի օր այս գործը քննելիս  
օգնութեան բերէ իրան, ինձ մատնէ և զրանով  
վերջապէս պարզի անլուծելի հանելուկը — —

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ

1880

ՏԱՐԻ ՅԱՌԱՋ

(ՀԱՅԸ ԵՒ ՀՐԷԱՆ)

Մատիրական պատմաճք

— Իսկ դու, Պետրոս, երբ ես ձեր նշխարհումն էի, քեզ յանձնեցի իմ աշխարհիս դռան բանալին, քեզ պահապան նշանակելով, միտդ բեր իմ 'բոլոր խօսքերս, որոնց վրայ այս ևս կաւելացնեմ. ոչ մի հրէայի ծնունդ չը պէտքէ ներս թողնես այստեղ, ոչ մի խարդախ, խաբեբայ հրէայի խօսքին հաւատարով, չը պէտքէ նրա յառաջ իմ տանս դուռը բանաս, միւս բոլորի համար ազատ է իմ սքանչելի պալատ-դրախտիս մուտքը!

Այսպէս խօսեց ինքը Քրիստոս և գնաց հանգստանալու իր կրած տանջանքների ցաւերը մեղմացնելու:

\* \* \*

Շատ շանցաւ:

— Ինչ էք կամենում ինձանից, հեռացէք անպիտաններ, Եհովփան ինձ պաշտպան է, կորէք դուք չար սատանաներ, ինձ դրախտ է նշանակլած, ես ձեզ հետ չեմ գար, Մեֆիսոս, այդ դու ես? ես քեզ ինչ եմ պարտք, որ չես թողնում հանգիստ ճանապարհորդեմ...

— Ոչ, մեր տէրը Լիւցիֆեր, հրամայել է անպատճառ քեզ իրան մօտ, դժոխային սարսա-

փելի կրակների մէջ տանել, իսկ եթէ չես հաւատում, ահա նրա օձը, որը տւել է նա իբրև նշան քեզ հաւատացնելու, կրկին չես հաւատում, հարուստ խելացի ջնուդ:

— Հա, իրաւի, այս օձը— նրա գաւազանը նշան է իր պատգամաւորներին հաւատ ընծայելու: Նա ինքն Արքան ինձ մօտ է ուղարկել, ինձ հրաւիրում է, բայց և այնպէս պէտք է մի հնար գտնել, սրանց ձեռքից ազատել, դժոխք չը գրնալ, մնացածը հեշտ է, ես անպայման դրախտ կը մտնեմ, չէ որ Մամ'օնեա ունեմ իբրև անցազիր, ինքն իրան այս մտածելով դարձաւ նա դէպի սատանան.

— Ոհ սիրելի, սրտիս հատորիկ հոգեակս Մեֆիստօ, ես քո ծառան կը խնդր... բայց... գնա ասա, թէ դու մի քիչ ուշ հասար, ասա որ ես ձեր սահմանը անցել էի, վերջապէս ինչ ուզում ես ասա, միայն թէ հեռացիր ինձանից— ահա քեզ, ահա մի ոսկոռ, բաւ է այսքանը? դէհ փակիր բերանդ, գրպանդ դիր այդ հարստութիւնը և բաւականացիր, կորիր, չէ որ ինձ սպասում են այնտեղ, դրախտում...

Ահա այսպէս հրէան խաբելով, մի փոքրիկ կաշառք տալով ազատեցաւ սատանայից և հրաժարելով դժոխք գնալուց, ուրախ-ուրախ մօտեցաւ դրախտի դռանը, որտեղ Պետրոսը— դոնապանը, քնել էր յոգնածութիւն զգալով...

\* \* \*

— Ով է ինձ կրկին անհանգստացնում, միթէ այդպէս շուտ-շուտ են մարդիկ աշխարհում մեռնում?

— Ես եմ, Տէր բոլոր հարուստների, ես եմ թագաւոր բոլոր Կաշառաց, վայ նրան որ ինձ հետ թշնամանում է, երանի նրան, որուն ես իմ ընկերս եմ անւանում!— Բաց դուռը!

— Բայց չէ որ դու հրէայի ծնունդ ես, անիծւած, իսկ նազովրեցի թագաւոր հրէաների հրամայել է տեղ չը տալ ձեզպիսիներին!...

— Պետրոս, գիտցիր որ մի քանի տօկօսներ (?!) չէ որ քեզ են հասնում, երբ իմ գործերս այդտեղ յաջողակ գնացին, չէ որ մեծ օգուտ կստանաս դու ինձանից, ահա քեզ մի փոքրիկ գումար, որ քո կեանքը ապահովւած լինի...

— Այստեղ այդ երկրի տիրապետող փողը, թագաւոր-թագաւորաց, այդ կեղտոտ դրամը անգոր է...

— Իսկ չէ որ դուք կրկին երկիր պիտի իջնէք, այն ժամանակ խօս այլևս ձկնորսութեամբ չը պէտքէ հաց ճարէք— — վերջապէս բաց դուռը— եթէ ոչ ես այն էլ կը ջաղջախեմ, ինչպէս որ ներս մտնելուց յետոյ քո գլուխը...

— Ոչ, ոչ, ահա դուռը բաց է, կարող ես ներս մտնել, միայն ծածկիր հրէութիւնդ, կամացուկ և վախենալով բացեց Պետրոսը արքայու-

Թեան դուռը մի հարուստ հրեայի առաջ նրանից խաբւելով...

— Ծածկել հրէութիւնը, ինչպէս, միթէ այդ կարելի բան է? Ոչ, ոչ. ես չեմ կարող, բայց և այնպէս իմ խորին շնորհակալութիւնս, այս ասելով շարտեց մի քսակ լի ոսկի Պետրոսի ոտքերի յառաջ:

\* \* \*

— Օհ! ճշմարիտ սա իսկական ոսկի է և որքան նուրբ տեսակից, իսկ շէնքը հիանալի է, ես իմ կեանքումս դրա նմանը տեսած չէի, տես ինչ է նշանակում «Իրախա» և այս աղամանդները, ինչ մեծութիւն, ինչ փայլուն գեղեցկութիւն, ախ աչքերս խաւարում են, ուշքս գնում է, էհ բարեկամ, խօսում է հրէան դրախտում, բռնում է մի անցւորի թւից ու ցոյց տալով Աստծոյ գահին, հարցնում է. — Ասա, սա իսկական ոսկի է, չէ? իսկ սրանք, այս ընկուզաչափ փայլուն քարերը, ապակիներ են թէ աղամանդներ? ասա կաղաչեմ, ինչ արժէ, արժան չի լինի, բայց թանգ էլ չի լինի...

Այսպէս հրէան ման էր գալիս դրախտում, Աստծոյ գահը և աղհասարակ այնտեղ գտնւած առարկաները քննում—գննում, արժէքը հարցնում, կարծես կամենում էր գործ կատարել, առուտուր անել ու դրանով զայրացնում, ձանձրացնում էր բոլոր այնտեղ գտնուող սուրբերին:

— Շուտով պէտք է մի գաղտնի ժողով կազմել, հրամայեց Քրիստոս, պէտք է խորհել թէ արդեօք ինչ անենք մենք այդ հրէայի հետ? մեր օրէնքները այնպէս են, որ մենք չենք կարող դուրս անել մէկին, որի առաջ մենք մեր ձեռքով դուռը բաց ենք արել, եթէ նա ինքն իր յոժար կամքով չը գնայ, դուրս անել մենք չենք կարող նրան, իր յոժար կամքով նա իհարկէ չի գնայ, ոչ, պէտք է խորհել, պէտք է մտածել, փչեցէք փողերը, հրեշտակներ, թող հաւաքւեն բոլոր գիտնականները, տեսնենք, չը կայ մեր մէջ գոնեայ մի սատանի ճուտ, որ կարենայ խաբել այդ հրէայ, ինքնակոչ հիւրին:

Հաւաքւեցին, խորհեցին, մտածեցին, գլուխները ցաւեցրին, բայց ոչ մի հնար, չը գտան հրէային ինքնակամ դուրս հանել, վերջը յոգնած ու յոյսերը կտրած մնացին միայն մի մտքով, համոզել, խնդրել աղաչել հրէային, հասկացնել որ դրախտը նրանց համար չէ և այդպիսով գոնեայ ազատել նրա ձանձրալի երևոյթից:

Բայց ինչ օգուտ, ինչ արդիւնք է բերում խնդիրքը, աղաչանքը, քանի որ նա չի ուզում դուրս գնալ, նա չի կամենում և երբէք չի էլ մտածում դրա վրայ:

Այս բանը ընկնում է դրախտում գտնուող միակ հայի ահանջը, վազում է նա իսկոյն Տիրոջ մօտ ու այսպէս խօսում.



—Տէր! ինձ շատ հեշտ է այն անպիտան հրէային այստեղից իր յօժար կամքով դուրս բերել:

—Որ այդպէս է, սիրելիս, ես բեզ կը վարձատրեմ, և...

—Այդ յետոյ, միայն խնդրում եմ հրեշտակներէրից մինին պատուիրեցէք զբախտից դուրս կանգնել և բռնալ շարունակ «լիբրիդացիայ» և ուրիշ ոչինչ:

Այս պատուէրից յետոյ գնաց իմաստուն հայր, գտաւ հրէային, ծանօթացաւ նրա հետ և սկսեց հարց ու փորձ անել նրա գործերի, տոկոսների մասին. մին էլ զբախց ձայն լսեց «լիբրիդացիայ»:

Հրէայի սուր ահանջները լսում են այդ, և չըզուշակելով իր գլխին գալիքը միամտաբար հարցնում է.

—Այդ ինչ բան է, ինչ են բղաւում? զիտէք ես նորեկ եմ և չըզիտեմ, մի գուցէ այստեղ էլ շոքենաւի նման ճաշի են հրաւիրում, բայց զանգահարելու փոխարէն բղաւում են?

—Ոչինչ, աժան ապրանք են ծախում, լիբրիդացիայ են անում զբախտի էն միւս մասում, մեզ այդ չի հետաքրքրում...

—Ինչպէս չէ, ինչպէս չէ հետաքրքրում, աժան ապրանք առնել և յետոյ թանգ գնով ծախել, զիտես որքան տոկոս կաշխատի, հրէայի

այս ասելը ու դուրս վազելը մի ակնթարթի գործ է լինում:

Հէնց այդ ըրպէին երբ հրէան ոտքը զբախտից դուրս է դնում, գռները փակուում են:

Ներսը ատամները ցոյց տալով, ծաղրում են հրեշտակները, հայր և միւս այնտեղ զբանուողները, իսկ դուրսը կանգնած էր խաբւած հրէան, հային բռունցքը ցոյց տալով, հասկանալով որ այդ խաղը նրա արարքն էր:

Հայր Հրէային խաբեց

Աստուծ ինքը վկայ կանգնեց.

ՄԱՆՐՈՒՆՔ

\*

—Ձեր ժողովում դուք էլ պիտի ընտրէք?  
—Աստուած ոչ անի! (ցոյց տալով կնոջը)  
կեանքումս մի անգամ եմ ընտրել, բաւական է!

\*

Տիկին. —... Ոչ, ես խելօքացայ, երբ հասա-  
կս առաւ!

Պարոն. — Բայց դուք երիտասարդ էք, դեռ  
հասակ առած չէք!...

\*

Ջահել տղերք ցանկանում են.

Աջ ձեռքում մի թուր  
Իսկ ձախում մի սուր  
Եւ ոգևորութեան հուր  
Սուրբ Սարգիս ակուր  
Երազում քիչ ջուր  
Սիրուն աղջիկ տուր  
Ի նշան սիրոյ փրփուր:

\*

Ինչ նմանութիւն կայ կօնեագի և օֆֆիցե-  
րի մէջ?

«Այդո՞ւս մզնտոտ ումզո՞ւս Լճ ուրսիմզ

ՉԱՐՄԱՆԱԼԻ ԿՏԱԿ:

Մի մեծ քաղաքում մեռնում է մի նշանա-  
ւոր հարուստ մարդ: Մեծ հետաքրքրութեամբ  
սպասում է ժողովուրդը նրա կտակի բացելուն,  
որովհետեւ նա ժառանգներ չէ ունենում:

Կտակը բաց են անում: Ի միջի այլոց գրը-  
ւած է. — «Իսկ իմ հարստութիւնս պէտք է երեք  
անձնաւորութեանց մէջ բաժանւի, այսինքն. մի  
քրիստոնեայի, մի մահմեդականի և մի հրէայի:  
Բայց այդ երեքն էլ նախ քան փողը ստանալը  
պարտաւոր են 200-ական բուրլի թաղմանս ժա-  
մանակ դազադիս մէջ գնել»:

Վիճակ են գցում, ընտրում են Վարդանը,  
Աբդիւլը և Մօսէսը:

Հարուստին թաղում են: Եւ երբ նստարը  
ժառանգութիւնը բաժանում է, հարցնում է ա-  
մեն միսին, թէ արդեօք նրանք հանգուցեալի  
ցանկութիւնը կատարել և արժանի են փողը ստա-  
նալու:

Քրիստոնիային և մահմեդականին շուտով  
հաւատացին և տւին հասանելիքը, իսկ հրէա-

յին խիստ հարցարննեցին, վերջ ի վերջոյ նեղա-  
ցած պատասխանում է Մօսէսը:

— Ենովվան վկայ, որ ես իմ պարտքս կա-  
տարել եմ: Միևնոյն չէ ինչ ձեռով էլ լինի այդ:  
Ես ուղղակի քրիստոնիայի և մահմեդականի դրած  
400 ըուբլին վերցրի և մի մուրհակ 600 ըուբ-  
լու ստորագրեցի: Ես խօսմ կոտր չեմ ընկել,  
պատրաստ եմ մշտական վճարելու:

\*

Ամեն բան սովորութիւն է:

— Հաւատարմութիւնը սրտի սովորութիւն է:

\*

Նախանձութիւնը — ինքնասիրութեան հի-  
ւանդութիւն է սիրոյ մէջ...

Մկիտանում — պատճառաբանութիւն:

Մի պարոն իր ընկերոջը. — Այս երեկոյ  
կնոջս մօտ մի պառաւ կին հիւր է եկել!

— Օհ! Դրա համար այսպէս երկար այստեղ  
ես նստել և չես կամենում տուն գնալ?

### ՅԱՆԿԱՐԾԱԾԻՆ ԽՕՍԲ

Մի ուսանող և մի հրէայ ճանապարհորդում  
են մի կուպէում: Ուսանողը երիտասարդական  
հպարտութեամբ նստած մի անկիւնում, կար-  
ծես զգուժ է հրէայի ներկայութիւնից և կար-  
գում է մի լրագիր: Հրէան խեղճացած քաշուե-  
լով միւս անկիւնը, լուռ ու մունջ նայում է:

Լուռ ու մունջի պաշտօն կատարելուց ձան-  
ձրացաւ շատախօս հրեան, և որպէսզի վերջա-  
պէս մի խօսակցութիւն սկսի ուսանողի հետ,  
հարցնում է նրան.

— Պարոն, ասացէք խնդրեմ, ինչ նորութիւն  
կայ լրագրում?

Իհարկէ «պարոն ուսանողը» լայեղ չի ա-  
նում պատասխանելու և լուռ է:

Իսկ երբ հրէան կրկնելով իր հարցը մի  
քանի անգամ, ձանձրացնում է լրագիր կարգա-  
ցողին, գայրացած պատասխանում է վերջինս.

— Այ, հէնց էն է կարգում եմ, որ վարչա-  
ւայի փողոցներից մէկում հրապարակաւ սպա-  
նել են մի հրէայի և մի շան ու քարը տալով  
հեռացրել են!

— Տեսնում էք, պարոն, պատասխանում է  
հրէան վրդովուած, որքան լաւ է եղել, որ մենք  
երկուսս այնտեղ չենք գտնւել:



\*

Կանայք սատանաներ են  
 Ինձ հետ շատերն էլ ասում են:  
 Բայց ամենն էլ ցանկանում են գաղտնի.  
 «Սատանան գայ և ինձ տանի»:

\*

— Ինչ են աշխարհում երեք փոփոզող բաները?

Ճիշտ էր մեծագույնը (մզվի)

\*

Փոքրիկ վահանին հարցնում է հայրը.  
 — Իբրև գատիական ընծայ ինչ ես կամենում եղբայրիկ թէ քոյրիկ?


— Գիտես, պապա, պատասխանում է վահանը, եթէ զժլարութիւն չի լինի մի հատ փոքրիկ ձի!

\*

Տասասխալ

— Այ տղայ, ինչով ազատեցիր զինուորութիւնից?

— Շատ հասարակ, շան փեռայ եղայ:



1912  
30

9114

6

1. Armenische Funken, Vienne 1912
2. Armeniens Leid, Vienne 1912

*Պատրաստում է*

4. Սիրոյ կէտեր...

*Եւրոպական զաւեշտական պատմածքներ:*

**ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.**

ՀՀ Ազգային գրադարան



NL0339206

25482